ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳԱՅԱՆԵ ԳԵՐԱՍԻՄԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

# Հայերենի բարբառների բայական եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննություն

Ժ.02.01. «Հայոց լեզու» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Պաշտոնական
ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Լ. Ս. Հովսեփյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Է. Ս. Մկրտչյան

բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Թ. Ս. Շահվերդյան

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ. Նալբանդյանի անվան
պետական մանկավարժական ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2013 թ. դեկտեմբերի 23-ին՝ ժամը $15^{00}$-ին, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015, Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2013 թ. նոյեմբերի 22-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ Ն. Մ. Սիմոնյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

***Հետազոտության թեմայի արդիականությունը:***

Հայերենի տարածքային տարբերակներում բայի եղանակաժամանակային համակարգերի հիմնահարցերը կարևորվել են բարբառագետների կողմից, և ըստ ամենայնի դրանք հետազոտվել ու լուսաբանվել են: Բարբառային միավորներին նվիրված ուսումնասիրություններում քննվել են գլխավորապես սահմանափակ տարածքների եղանակաժամանակային ձևերը, որոնք, սակայն, ներկայացվել են տարբեր խորությամբ՝ պայմանավորված ինչպես փաստական նյութերի ծավալով ու քննարկվող խնդիրների ուղղվածությամբ, այնպես էլ այդ հետազոտությունների բնույթով և նպատակադրմամբ:

Բարբառագիտության զարգացման արդի փուլում առանձին բարբառների ուսումնասիրությունների, ինչպես նաև հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով շուրջ 500 հայկական բնակավայրերից բարբառային հատկանիշների գրանցման շնորհիվ կուտակվել է հսկայածավալ նյութ, որի՝ բայական հատկանիշներին վերաբերող տվյալները դեռևս գիտական շրջանառության մեջ չեն դրվել: Ուստի խիստ կարևորվում է փաստական այդ հարուստ նյութի սահմաններում հայերենի բարբառների բայի եղանակաժամանակային ձևերի զուգադրական քննությունը, որի ընթացքում ի հայտ են գալիս բայական հատկանիշների ընդհանրությունների և տարբերությունների այնպիսի խմբեր, որոնց միջոցով կարելի է պարզել բարբառների և բարբառային խմբակցությունների տիպաբանական բնութագրերը:

***Հետազոտության նպատակը և խնդիրները:*** Աշխատանքի նպատակն է ներկայացնել բարբառների եղանակաժամանակային կազմությունների զարգացման պատմությունը և տարածագործառական բնութագիրը, դիտարկել դրանք զուգադրական քննության համատեքստում և արժևորել դրանց դերը հայերենի քերականական կառուցվածքում: Առաջադիր նպատակը իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ խնդիրները.

ա) բացահայտել բարբառների եղանակաժամանակային համակարգերի պատմական զարգացման բնորոշ գծերը,

բ) վեր հանել բայի եղանակային ձևերի կառուցվածքային բաղադրիչների գործառական արժեքը,

գ) ներկայացնել եղանակաժամանակային համակարգերի տարածական-գործառական բնութագրերը,

դ) որոշել եղանակաժամանակային կաղապարների տարածման սահմանները,

ե) որոշարկել բարբառային տարածքների և ենթատարածքների սահմանագծերը,

զ) պարզել քերականական համանիշության, համանունության և բազմիմաստության արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերությունը:

***Օգտագործված աղբյուրները:*** Սույն հետազոտության նպատակի և խնդիրների լուծմանը մեծապես նպաստել են մինչև այժմ կատարված ու-

ուսումնասիրությունները: Ատենախոսության մեջ օգտագործվել են Հր. Աճառյանի, Ա. Այտընյանի, Ս. Ղազարյանի, Ա. Ղարիբյանի, Գ. Ջահուկյանի՝ հայ բարբառների եղանակաժամանակային համակարգերի խնդիրներին նվիրված աշխատանքները, Ա. Գրիգորյանի, Ա. Ղարիբյանի, Ա. Պողոսյանի հայ բարբառագիտության դասընթացները, «Հայերենի բարբառագիտական ատլաս» ժողովածուի 3 պրակները, բարբառների քննությանը նվիրված մենագրությունները, ինչպես նաև Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերը:

Մեր հետազոտության տեսական շարադրանքին օգնել են նաև Յու. Ավետիսյանի, Հովh. Բարսեղյանի, Լ. Եզեկյանի, Լ. Խաչատրյանի, Վ. Համբարձումյանի, Լ. Հովհաննիսյանի, Լ. Հովսեփյանի, Ա. Սարգսյանի, Ռ. Սաքապետոյանի՝ հայերենի զարգացման տարբեր փուլերի բայական համակարգերին առնչվող աշխատությունները:

***Հետազոտության գիտական նորույթը:*** Հայերենի մոտ 500 բարբառային միավորների եղանակաժամանակային կազմությունները առաջին անգամ են համաժամանակյա ու տարժամանակյա հայեցակետերով ենթարկվում համակարգային քննության, դառնում զուգադրական վերլուծության և հետազոտության նյութ: Կատարելով հայերենի տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննություն՝ բացահայտել ենք դրանց արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության դրսևորումները, համակարգել և գիտական լայն շրջանառության մեջ ենք դրել մոտ 500 բարբառային միավորների եզակի փաստեր, այլև կարևոր տվյալներ, որոնց օգնությամբ ճշգրտել ենք բարբառային միավորների փոխհարաբերությունները, դասակարգման սկզբունքները, բացահայտել բարբառների եղանակաժամանակային կազմություններին առնչվող հիմնախնդիրներ և այլն:

***Հետազոտության մեթոդները:*** Ուսումնասիրության ընթացքում կիրառել ենք պատմահամեմատական մեթոդի համաժամանակյա և տարժամանակյա հետազոտության եղանակները: Դրանք լայն հնարավորություն են ընձեռել պարզելու բարբառների եղանակաժամանակային համակարգերի ոչ միայն պատմական զարգացման ուղին, ժամանակի ընթացքում կրած տեղաշարժերն ու տարաբնույթ ձևափոխությունները, այլև նրանց արդի վիճակը: Քննության ընթացքում կիրառել ենք նաև լեզվաբանական աշխարհագրության մեթոդը, որի միջոցով բացահայտել ենք լեզվական երևույթների տարածական բաշխման օրինաչափությունները:

***Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը:***

Սույն ատենախոսության տեսական արժեքը հայերենի պատմական բարբառագիտության կարևոր հիմնախնդրի ամբողջական մշակումն է, որ վերաբերում է բարբառային միավորներում բայերի եղանակաժամանակային համակարգերի ձևաիմաստային գիտական նկարագրությանը: Խնդրո առարկա համակարգերի զուգադրական քննության միջոցով բացահայտվում են բայական հատկանիշների ընդհանրությունների և տարբերությունների մի շարք հատկանիշներ, որոնց միջոցով հնարավոր է որոշել արևելյան և արևմտյան խմբակցության բարբառների տիպաբանական բնութագրերը: Ուսումնասիրությունը և ստացված արդյունքները

կարող են նպաստել հայերենի պատմական քերականության, մասնավորապես պատմական բարբառագիտության գիտական նկարագրության ամբողջացմանը:

Հետազոտության արդյունքները գործնականում կիրառելի են բուհերի բարբառագիտության, հայոց լեզվի պատմության դասընթացներում, ինչպես նաև մեթոդական ծրագրերում և ուսումնական ձեռնարկներում:

***Ատենախոսության փորձաքննությունը:*** Հետազոտության հիմնական դրույթները և արդյունքները զեկուցումների ձևով ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, արտացոլվել հրատարակված 27 հոդվածներում և զեկուցումների դրույթներում, ինչպես նաև մեկ մենագրությունում: Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

***Ատենախոսության կառուցվածքը:*** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից (աղյուսակներ (6) և քարտեզներ (26):

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածության** մեջ տրվում է հարցի պատմությունը: Բարբառների եղանակաժամանակային համակարգերի վերաբերյալ դիտարկումներ ու մեկնություններ կան դեռևս 19-րդ դարի քերականների գործերում, սակայն դրանցում տարածքային տարբերակների եղանակաժամանակային կազմությունները ամբողջապես չեն հետազոտվել:

Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի քննությանը անդրադարձել է Հ. Աճառյանը: Նա նկարագրել է 3 տասնյակից ավելի բարբառներ, կատարել է դրանց գիտական առաջին դասակարգումը, որի հիմքում ընկած են ներկա ժամանակի բայաձևերի արտահայտման տարբերությունները: Հ. Աճառյանը, ներկայի կազմությունների ձևային տարբերությունը նկատի ունենալով, առանձնացնում է 3 ճյուղ՝ *Ում, Կը, Ել*: Հիշյալ դասակարգումը թեև ընդունվել է լեզվաբանների կողմից, սակայն հետագայում ենթարկվել է մասնակի փոփոխությունների: Իր աշխատություններում Հ. Աճառյանը կատարել է խոնարհման համակարգի ծագումնաբանական քննություն, դիտարկումներ է արել բայի արտահայտած քերականական տարբեր իմաստների, ձևային դրսևորումների միջոցների ու եղանակների վերաբերյալ:

Մեկ տասնյակից ավելի բարբառների քննությանը նվիրված մենագրություններում («Քննություն Նոր-Ջուղայի բարբառի», «Քննություն Վանի բարբառի», «Քննություն Ագուլիսի բարբառի», «Քննություն պոլսահայ բարբառի» և այլն) Հ. Աճառյանը առավել հանգամանորեն է ներկայացնում դրանց ձևաբանական, մասնավորապես բայական հատկանիշները: Հ. Աճառյանի տեսակետները հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի վերաբերյալ ամբողջական և վերջնական չէին կարող լինել, քանի որ հայերենի տարածքային

տարբերակները լիովին ուսումնասիրված չէին, և կային դեռևս չհետազոտված բարբառային միավորներ:

Բարբառային նոր միավորների նկարագրությունը հնարավորություն է տվել ձևաբանական դասակարգման հետագա ճշգրտման: Ա. Ղարիբյանը առանձնացրել է 7 ճյուղ՝ Ում, Լ, Ս, Կա, Կը, Հա (ևս մեկ ճյուղ գրաբարակերպ խմբում է առանձնացված), որոնք զետեղել է 3 խմբում՝ դերբայավոր, մասնիկավոր և գրաբարակերպ՝ նկատի ունենալով դրանց կառուցվածքային ընդհանրությունը[1]: Նա Հա ճյուղում տեղադրել է բարբառային այն միավորները (Արաբկիր, Արամո, Եդեսիա, Քեսաբ), որոնցում գործածվում են *հա, ա, ը* եղանականիշ մասնիկներով և դիմավոր բայաձևերով հարադրված կազմությունները, սակայն, մեր կարծիքով, այս ճյուղի առանձնացումը հիմնավորված չէ: Եդեսիայի, Քեսաբի բարբառներում, Արամոյի խոսվածքում (նախկինում նաև Արաբկիրի և Մալաթիայի բարբառներում) *հա* եղանականիշ մասնիկով կազմվում է ոչ թե ընդհանրական ներկան, այլ շարունակականը, իսկ ճյուղերի առանձնացման համար հիմք են ծառայում ընդհանրական ներկայի կազմությունները: Հետևաբար հիմնավորված չէ *Հա* ճյուղի առանձնացումը[2].

Ա. Ղարիբյանը *Կա* ճյուղում միավորել է Անտիոքի բարբառախմբի Բեյլանի, Մարաշ-Զեյթունի և Փոքր Ասիայի բարբառախմբի Կեսարիայի բարբառները, սակայն սրանցում նախապես *կա* մասնիկով հարադրությունները գործածվել են որպես շարունակական ժամանակների ձևեր: Հիշյալ փաստը կասկածի տակ է դնում նաև *Կա* ճյուղի ընդունումը[3]:

Է. Աղայանը, ընդունելով Ա. Ղարիբյանի դասակարգման հիմնական սկզբունքները, միացրել է գրաբարակերպ և մասնիկավոր խմբերը՝ տարբերակելով գրաբարակերպ-մասնիկավոր ու դերբայական կազմությամբ ներկայով բարբառներ, և Ա. Ղարիբյանի կողմից նշված խմբերը կոչել է ճյուղեր, իսկ ճյուղերը՝ ենթաճյուղեր[4]:

Ի տարբերություն վերոնշյալի՝ Գ. Ջահուկյանը ձևաբանական դասակարգման սկզբունքի փոխարեն առաջ է քաշել պատմաձևաբանականը: Այս դեպքում բարբառային միավորները առանձնացնելիս նկատի է առնվում ներկայի կազմությանը մասնակցող նախամասնիկների և դերբայական վերջամասնիկների ելակետային, նախնական սկզբնաձևը:

Մեր կողմից բարբառների դասակարգման այդ սկզբունքը վերանվանվել է պատմատիպաձևաբանական՝ ÝÏ³ ï Ç áõÝ»Ý³ Éáí ³ ÛÝ, áñ Ñ³ Û» -րենի տարածքային տարբերակները ներկայի կազմության տիպաբանական հատկանիշով բաժանվում են հինգ, իսկ նյութական արտահայտության հատկանիշով՝ չորս խմբերի: Առաջինները կոչվել են տիպեր

---

[1] Տե՛ս **Ա. Ղարիբյան**, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 55-56:

[2] **Գ. Ջահուկյան**, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 105:

[3] Նույն տեղում:

[4] Տե՛ս **Է. Աղայան**, Մեղրու բարբառը, Երևան, 1954, էջ 403:

(դերբայակազմ, մասնիկակազմ, դերբայակազմ-մասնիկավոր, գրաբա-տիպ-մասնիկավոր, գրաբարատիպ-դերբայակազմ), իսկ երկրորդները՝ ճյուղեր *(Ում, Կու, Լիս, Լ)*: Բացի այդ, ճյուղերի առանձնացումը կատարվել է պատմական հիմքով (հիմք ենք ընդունել ներկայի կազմությանը մասնակցող եղանականիշների ու դերբայների նախնական, ելակետային ձևը):

Ա. Աբրահամյանը ուսումնասիրել է բայի անդեմ ձևերը, դրանց ձևաբանական, բառակազմական, իմաստաբանական հատկանիշները: Քանի որ հեղինակի խնդիրը եղել է հայերենի դերբայների զարգացումն ու պատմական փոփոխությունները ներկայացնելը, նա հետազոտել է դերբայների բարբառային դրսևորումները ևս, անդրադարձել դերբայական ձևերի առաջացման հարցերին և արել կարևոր եզրահանգումներ:

Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածություն» աշխատության մեջ, ի տարբերություն բարբառագիտության մեջ ընդունված միահատկանիշ դասակարգումների, կատարել է բազմահատկանիշ դասակարգում: Բայի խոնարհման համակարգում բարբառների դրսևորած տարբերությունները նա արտահայտել է 25 զուգաբանությունների շարքով՝ ընտրելով առավել կարևոր և տարածված հատկանիշներ: Զուգաբանությունները ներկայացնում են լծորդությունների, դերբայների կազմության և գործածության, ներկայի, ապառնիի, անցյալ կատարյալի, նաև ժխտական ձևերի բարբառային դրսևորումների կարևոր առանձնահատկությունները *(ում*-ով ներկա (և անցյալ անկատար), *լիս*-ով ներկա (և անցյալ անկատար), *ման*-ով դերբայ, *ր*-ով վաղակատար, *պիտի* եղանականիշի սղված ձև, բաղադրյալ անցյալ ձևերի կազմում անցյալ ցույց տվող բառ-մասնիկի կամ վերջամասնիկի առկայություն, ժխտական մասնիկների հետադաս գործածություն և այլն*)*:

Տարածքային տարբերակների (բարբառներ, ենթաբարբառներ, խոսվածքներ) եղանակաժամանակային համակարգերին վերաբերող խնդիրներ են քննվել նաև բարբառային միավորների գիտական նկարագրություններում, սակայն այդ ուսումնասիրություններում եղանակաժամանակային կազմությունները հետազոտվել են առանց տեսական վերլուծությունների և բարբառային մյուս միավորների հետ համեմատության:

Առաջին գլխում («Բարբառների եղանակաժամանակային համակարգերի պատմական զարգացումը») ի մի են բերվում փաստական այն բոլոր նյութերն ու տեսական հիմնավորումները, որոնք շոշափում են եղանակաժամանակային կազմությունների իմաստային դրսևորումների, ծագման, հետագա զարգացման և ձևափոխությունների հետ կապված հարցերը:

Հայտնի է, որ ստորադասական եղանակի բայաձևերի իմաստագործառական անորոշությունը և դրանց փոխարեն ներկա և անցյալ անկատար ժամանակաիմաստներն արտահայտող կազմությունների հաճախադեպ կիրառությունները պատճառ են դարձել ստորադասական եղանակի ժամանակաձևերի գործառական սահմանափակման և անհետացման: Դրա հետևանքով առաջացել է անորոշություն. լեզվական միևնույն ձևով արտահայտվել է քերականական մի քանի իմաստ՝ ներկայի և անցյալ անկատարի, ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի: Հիշյալ

կազմությունների գործառական բազմարժեքությունը վերացնելու նպատակով կազմվել են ներկայի և անցյալ անկատարի նոր կառուցա-տիպեր: Մատենագրությամբ ավանդված վկայությունները *(Յոյնք են ի գալ, Եւտ ում տալ էր զօրէնսն, Ընդ որ գալ էր)*, արդի տարբեր խոսվածքներում գործածվող անորոշով ներկայի և անկատարի ձևերը *(մընալ ըմ (իմ)* ենթադրել են տալիս, որ սկզբնապես այս նպատակով գործածվել են նախդրիվ անորոշ դերբայով և օժանդակ բայով հարադրությունները: Հե-տագայում անորոշով ներկան և անցյալ անկատարը տարածքային տարբեր ճյուղավորումներում ձեռք են բերել բազմիմաստություն: Բա-յական միավորների բովանդակության պլանում հստակություն մտցնելու միտմամբ հայերենի տարածքային տարբերակներում գործածվել են ներկայի և անցյալ անկատարի նոր ձևեր՝ *կու* եղանականիշով, *-ում* և *-լիս* ձևույթներն ունեցող դերբայներով բաղադրված: Թեև ստեղծվել են ներկայի և անցյալ անկատարի նոր կազմություններ, սակայն գրաբարատիպ ներկան և անցյալ անկատարը մասամբ պահպանվել են Խոտրջուրի բարբառում և Արամոյի խոսվածքում: Սրանցում բաղաձայնա-սկիզբ բայերի (Արամոյում նաև միավանկ բայերի) ներկան և անցյալ անկատարը գրաբարատիպ են *(մընամ «մնում եմ», մընայի «մնում էի»)*, իսկ ձայնավորասկիզբ բայերինը՝ նախամասնիկավոր *(կաղամ «աղում եմ», կաղայի «աղում էի»)*: Ի հակադրություն Խոտրջուրի և Արամոյի խոսվածքների՝ Կռզենի բարբառում, Լոռու, Շամշադին-Դիլիջանի խոս-վածքներում պահպանված է գրաբարյան անցյալ անկատարը *(խօսի «խոսում էի»)*:

Արևմտյան խմբակցության բարբառների մի հատվածում ներկայի և անցյալ անկատարի մեկ այլ իմաստի՝ շարունակականի համար են ստեղծվել կաղապարային կառույցներ *՝կոր, էր, դար, ունի//գունի, հայէ, հայկալ* մասնիկների զուգորդությամբ: Դրանք թերևս առաջացել են ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի համար առանձին ձևատիպարներ ունենալու միտմամբ:

Ներկայի և անցյալ անկատարի նորակազմ ձևերի առաջացմամբ չի լուծվել ներկա և ապառնի ժամանակաձևերի տարբերակման խնդիրը. *կու-*ով կազմությունները բազմիմաստ էին, և սահմանական ներկան, անցյալ անկատարն ու ապառնին տարբերակված արտահայտաձևեր չունեին: Հետագայում այս գործածությունը պահպանվել է միայն արևմտյան տարածքում, իսկ արևելյան խմբակցության բարբառային միավորները, ներկայի և անցյալ անկատարի համար ստեղծելով նոր ձևեր, *կու* եղանականիշ մասնիկով զուգորդված բայաձևերով արտահայտել են ապառնիի իմաստ: Ավելի ուշ ապառնիի հարացույցում սկսել է գործածվել *պիտի* եղանականիշ մասնիկով զուգորդված կաղապարային կառույցը՝ *կը* մասնիկով ձևերի իմաստագործառական անորոշությունը վերացնելու համար[5]:

---

[5] Տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի համեմատությամբ 562 լեզուների, Երևան, հ. 4, գիրք Բ, էջ 173:

*Պիտի* եղանականիշ մասնիկով բայաձևերի գործածությունը բարբառների արևմտյան և արևելյան խմբակցություններում զարգացման տարբեր ընթացք է ունեցել: Եթե արևմտյան խմբակցության բարբառների մեծ մասում դրանք արտահայտում են սահմանական և հարկադրական ապառնիների իմաստ, ապա արևելյան խմբակցության բարբառներում (բացառությամբ Լոռու, Շամշադին-Դիլիջանի խոսվածքների) այդ բայաձևերը միարժեք են, գործառականորեն ծանրաբեռնված չեն և միայն հարկադրական ապառնիի ու անցյալի իմաստներով են գործածվում: Հավանաբար *պիտի*-ով ձևերի գործածությունը ապառնիի իմաստով նախապես բնորոշ է եղել արևմտյան խմբակցության բարբառներին, որոնցում ապառնիության իմաստը դրսևորման առանձին ձև չի ունեցել:

Ապառնի ժամանակի իմաստով կիրառվում են ըղձական եղանակի բայաձևերը ևս: Տարածքային տարբերակներում, որպես ըղձական եղանակի ժամանակաձևեր, գործածվում են գրաբարյան ներկայի և անցյալ անկատարի կազմությունները, որոնք, ինչպես գրաբարում, բարբառներում ևս զուրկ են մասնիկից: Ըղձական ապառնիի կազմությունները բարբառների արևելյան և արևմտյան խմբակցություններում համադրական կառուցվածք ունեն, դրսևորվում են գրաբարյան ներկայի տիպի բայաձևերով և բացի հնչյունական փոփոխություններից՝ ձևային այլ տարբերակվածություն հանդես չեն բերում: Ըղձական անցյալի բայաձևերին հատուկ են համադրական կազմության մեկ և վերլուծական կազմության երկու կառուցատիպեր:

Անցյալ ժամանակաձևերը ևս տարածքային տարբերակներում արտահայտման տարատեսակ ձևեր ունեն և զարգացման երկարատև շրջան են անցել: Դրանցից են վաղակատար դերբայով բաղադրված կազմությունները, որոնք բնութագրվում են գործառական բազմարժեքությամբ՝ արտահայտելով ժամանակային 3 իմաստ՝ վաղակատարի, հարակատարի և անցյալ կատարյալի:

Հարակատար դերբայով կազմությունները բարբառների արևմտահայ խմբակցությունում գործառության լայն ոլորտ ունեն. հնարավոր է բոլոր բայերի հարակատարի զուգորդումը օժանդակ բայի հետ: Արևելահայ խմբակցության բարբառներում դրանք ունեն ծավալային սահմանափակում. հատուկ են կրավորական սեռի բայերին և չեզոք սեռի այն բայերին, որոնց ցույց տված գործողությանը բնորոշ է հետևանքային ավարտ, կամ որոնք վիճակ, դրություն են ցույց տալիս: Հարակատար դերբայով կազմությունները բարբառներում ունեն երկակի արժեք: Բարբառային որոշ միավորներում հարակատար դերբայը բայի բաղադրյալ ժամանակաձևերում արտահայտում է քերականական երկու իմաստ՝ հարակատարություն և վաղակատարություն:

Անցյալ կատարյալ ժամանակաձևը պատմական զարգացման ընթացքում սակավ փոփոխությունների է ենթարկվել: Հայերենի տարածքային տարբերակներում պահպանվել են անցյալ կատարյալի ներգործաձև և կրավորաձև դիմորոշ թեքույթները՝ իրենց բնորոշ *ի* և *ա* ձայնավորներով: Գրաբարում, ինչպես հայտնի է, ներգործաձև խոնարհման դեպքում անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքը վերջավորություն չի ունեցել, և միավանկ բայերը ստացել են *ե* կամ *է*

նախահավելվածը: Այս օրինաչափությանը չեն ենթարկվել *ե* կամ *է* սկզբնահնչյունով բայերը: Բայական հիշյալ կազմությունը առկա է նաև բարբառներում *(էզար, էթող)*:

Հայերենի տարածքային տարբերակներում գործածվող ժխտական խոնարհման կառուցատիպերը ևս պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են փոփոխությունների: Գրաբարում ժխտական բայաձևերը կազմվել են *ոչ, չ-* և *մի* ժխտական նախամասնիկներով: Ժխտական ներկայի՝ *չ-* նախամասնիկով կազմությունը հետագա դարերում լայն կիրառություն է ստացել, սակայն երկար ժամանակ չի կարողացել դուրս մղել *ոչ* ժխտական մասնիկով հարադրությունները և կիրառվել է նրանց զուգահեռ: Այսօր էլ դրանք գործածվում են հայերենի տարածքային տարբերակների մեծ մասում, իսկ ավելի ստվար հատվածում շարունակում են կիրառվել *ոչ* մասնիկով զուգադրությունները:

Դրական խոնարհման ժամանակաձևերի փոփոխությամբ պայմանավորված՝ ժխտականի հարացույցում ևս հայտնվել են նոր ձևեր, և հինհայերենյան ժխտական կազմություններին զուգահեռ կիրառվել են ժխտականի նորակազմ ձևերը *(չես ի կարել «չես կարողանում»)*: Ժխտականի վերոբերյալ ձևերը լեզվի պատմական զարգացման ընթացքում կրել են փոփոխություններ. գործածությունից դուրս է եկել *ի* նախդիրը, իսկ անորոշ դերբայի վերջնահնչյունը փոխարինվել է *ը*-ով: Դերբայակազմ ձևերի առաջացմամբ պայմանավորված՝ կազմվում են ժխտականի դերբայակազմ ձևեր *(չեմ գրում, չես գրես)*:

Տարածքային տարբերակներում ժխտական խոնարհման կազմությունները բնորոշվում են մասնիկավորմամբ: Որպես ժխտական մասնիկներ գործածվում են *չ*-ն, *ոչ*-ը և *մի*-ն. *չ*-ն գործածվում է միայն որպես նախամասնիկ, իսկ *ոչ*-ը և *մի*-ն երկու դիրքով էլ կիրառվում են:

Բարբառների եղանակաժամանակային կազմությունների քննությունից պարզ դարձավ, որ դրանք պատմական զարգացման ընթացքում ենթարկվել են փոփոխությունների: Փոխվել են եղանակների ու ժամանակաձևերի քանակը (հինհայերենյան որոշ ժամանակաձևեր վերացել են, առաջացել են նորակազմ բայական միավորներ), հարացուցային կազմությունների կառուցատիպերը, ժամանակային իմաստների դրսևորման միջոցները:

Երկրորդ գլխում («Բարբառների բայի եղանակային ձևերի կառուցվածքային բաղադրիչների զուգադրական քննություն») ներկայացվում են դեմքի, թվի, ժամանակի քերականական կարգերի դրսևորման ձևաբանական միջոցների բարբառային արտահայտությունները, կատարվում է բայի եղանակային ձևերի կառուցվածքային բաղադրիչների ծագումնաբանական և զուգադրական քննություն:

Բայի եղանակային ձևերը բնութագրվում են դեմքի, թվի, եղանակի, ժամանակի քերականական կարգերով: Եղանակային հակադրությունը դրսևորվում է եղանականիշ մասնիկների, իսկ թվադիմային ու ժամանակային հակադրությունները՝ ժամանականիշ մասնիկների, թեքույթների ու հիմքակազմ ածանցների միջոցով: Ժամանակի կարգը արտահայտվում է ժամանակաձևերի օգնությամբ, որոնք, ըստ կազմության, լինում են համադրական և վերլուծական: Համադրական

ժամանակաձևերի բաղադրիչները միաձույլ են. կազմված են նախամասնիկից, հիմքից՝ նշույթավոր և աննշույթ[6], ինչպես նաև դիմաթվանիշ թեքույթներից: Հայ լեզվաբանության մեջ համադրական են համարվում նաև *պիտի* և *մի* մասնիկներով կազմությունները՝ *պիտի գրեմ, մի՛ գրիր,* թեև դրանց բաղադրիչները առանձին են: Հիշյալ կազմությունները, ըստ Ս. Աբրահամյանի, որպես ժամանակային ձևեր, համադրական են, իսկ որպես եղանակային ձևեր՝ վերլուծական[7]: Ավելի վաղ գրված հոդվածում Ս. Աբրահամյանը առավել հստակ է ներկայացնում իր դիրքորոշումը. «Համադրական դիմավոր ձևերն են՝ սահմանականի անցյալ կատարյալը, ըղձական ու ենթադրական եղանակների ձևերը և հրամայականի հաստատականը…, վերլուծական են սահմանական եղանակի մյուս ձևերը, հարկադրական եղանակի ձևերը, ենթադրականի ժխտականը և հրամայականի արգելականը»[8]: Հիմք ընդունելով այս և նմանատիպ այլ տեսակետներ (Մ. Աբեղյան, Գ. Ջահուկյան)[9] մենք ևս բարբառներում գործածվող ժամանակաձևերը համադրական և վերլուծական խմբերի ենք բաժանել՝ նկատի ունենալով դրանց միասին կամ անջատ գրությունը:

Դիմավոր ձևերի ժամանակային տարբերությունները արտահայտվում են ժամանակադիմաթվանիշ թեքույթների օգնությամբ: Դրանք զուգորդվում են անորոշի և կատարյալի հիմքերին՝ առաջացնելով ձևավոր հիմքի հետևյալ տեսակները՝ հնչութափոխված և շեշտափոխված-անշեշտ[10]: Լեզվի պատմական զարգացման ընթացքում դիմաթվանիշները կրել են հնչյունական փոփոխություններ, որոնք իրենց արտացոլումն են գտել բարբառներում: Դրանցում գրաբարյան 4 լծորդություններից գործածվում են 3-ը՝ *ե (է), ի, ա* (*ու* լծորդությունը առկա է արևմտյան խմբակցության բարբառների սահմանափակ թվով բայերում), այդ պատճառով էլ ներկայացվում են *ե(է), ի* և *ա* լծորդությունների բայերի ժամանակադիմաթվանիշ վերջավորությունների բարբառային դրսևորումները: Դրանք կազմում են չորս խումբ:

Դիմաթվանիշ թեքույթների մեկ խումբ են կազմում գրաբարյան ներկայի (ըղձական ապառնիի) վերջավորությունները: Միջինհայերենյան ընդհանուր փոփոխություններից բացի բարբառներում առկա են նաև

---

[6] Տե՛ս **Է. Աղայան**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 320:

[7] **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981, էջ 294:

[8] **Ս. Աբրահամյան**, Ժամանակակից հայերենի դերբայների և ժամանակների մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, 10, Երևան, 1969, էջ 29:

[9] Տե՛ս **Մ. Աբեղյան**, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 102-103, **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 265:

[10] Տե՛ս **Գ. Ջահուկյան**, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 160:

թեքույթներին նախորդող լծորդ ձայնավորների հնչյունական փոփոխություններ՝ *է>ի* (եզակի 3-րդ *(էմ, էս, ի, էնք, էք, էն)*, եզակի և հոգնակի 1-ին *(կըրիմ, կըրէս, կըրէ, կըրինք, կըրէք, կըրէն)*, եզակի 1-ին, 2-րդ, հոգնակի 1-ին, 3-րդ *(խըմիմ, խըմիս, խըմէ, խըմինք, խըմէք, խըմին)*, եզակի 1-ին, 2-րդ, հոգնակի 1-ին, 2-րդ, 3-րդ *(սիրիմ, սիրիս, սիրէ, սիրինք, սիրիք, սիրին)*, եզակի 1-ին, 2-րդ, 3-րդ, հոգնակի 1-ին, 3-րդ *(սիրիմ, սիրիս, սիրի, սիրինք, սիրէք, սիրին)* դեմքերում) և *ա>օ (մընօմ, մընօս, մընօ…)*: Համշենի բարբառում հոգնակի 1-ին դեմքում *ն* ձայնորդի հավելում չի կատարվել, և հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի ձևային տարբերությունը պայմանավորված է լծորդակիր ձայնավորներով *(կըրիմ, կըրիս, կըրա, կըրիկ, կըրէկ, կըրին)*:

Երկրորդ խումբը գրաբարյան անցյալ անկատարի վերջավորություններն են, որոնք, դարձյալ անորոշի հիմքին կցվելով, կազմում են սահմանական անցյալ անկատար, ըղձական, ենթադրական, հարկադրական անցյալ ժամանակաձևերը: Ինչպես գրաբարում, տարածքային տարբերակներում ևս *ե(է)* և *ի* լծորդության բայերի դիմաթվանիշ թեքույթների տարբերությունը անցյալ ժամանակաձևերում չեզոքացել է. դրանք ունեն նույն դիմաթվանիշները, այդ պատճառով էլ ներկայացվում են միասին:

Հնդհայերենյան անցյալ անկատարի դիմային վերջավորությունները միջին հայերենում հիմնականում պահպանվել են՝ բացառությամբ հոգնակի 1-ին դեմքի, որտեղ կատարվել է *ն*-ի հավելում, և եզակի 3-րդ դեմքի, որը հատկանշվում է *յ* ձայնորդի անկմամբ: Բարբառներում, բացի վերոհիշյալից, դրանք ենթարկվել են այլ փոփոխությունների: Նախապես կատարվել է եզակի 3-րդ դեմքի *յ* ձայնորդի անկում *(խօսէի, խօսէիր, խօսէր, խօսէյաք, խօսէիք, խօսէին)*, այնուհետև *է* և *ի* հնչյունների միջև *ա* լծորդության բայերի համաբանությամբ հավելվել է *յ* ձայնորդը *(բաքնէյի յա, բաքնէր ա, բաքնէյաք ա, բաքնէյիք ա, բաքնէյին ա):* Հավանաբար *յ* կիսաձայնի հավելումը նախորդել է հոգնակի 1-ին դեմքում *ն* ձայնորդի հավելմանը, քանի որ բարբառային այս միավորներին բնորոշ չէ հոգնակի 1-ին դեմքի *ն* դիմանիշը: Այնուհետև տեղի է ունեցել *ն* ձայնորդի հավելում *(ըսէյի, ըսէյիր, ըսէր, ըսէյանք, ըսէյիք, ըսէյին)*, և հոգնակի 1-ին դեմքի *ա* ձայնավորը փոխվել է *ի* հնչյունի՝ *էանք>էինք (ուղէի. ուղէր, ուղէր, ուղէինք, ուղէիք, ուղէին)*: Հավարիկի բարբառում տեղի է ունեցել *ի>յ* հնչյունական անցումը՝ *գիրէյ, գիրէյր, գիրէր, գիրէյնք, գիրէյք, գիրէյն*: Անկատարի դիմաթվային վերջավորություններում սղվել է նաև միմյանց հաջորդող *է,ի* լծորդներից որևէ մեկը *(խօսի, խօսիր, խօսէր կամ՝ կըրէ, կըրէր, կըրէր)*:

Համշենի բարբառը առանձնանում է անցյալ անկատարի վերջավորություններով *(կըրէյի, կըրէյդը, կըրէր, կըրակը, կըրէկը, կըրէյնը)* և չի հարում բարբառային որևէ տարածքի: Հոգնակի թվի վերջավորություններից հետո *ը* հնչյունի առկայությունը Հ. Աճառյանը ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի հոգնակի 2-րդ դեմքերի համանունությունից խուսափելու միջոց է համարում, իսկ եզակի 2-րդ դեմքում առկա *դ* հնչյունը՝ տաճկերենի անցյալ անկատարի մասնիկի համաբանության արդյունք: Վերջինս գուցե 2-րդ դեմքի *դ* դիմորոշ հոդն է:

*Ա* խոնարհման բայերի գրաբարյան անցյալ անկատարի վերջավորությունները համանման փոփոխություններ են կրել *(մընայի, մընայիր, մընար..., մնայ, մնայր, մնար..., մընի, մընիր, մընէր..., մընէ, մընէս, մընէր...):*

Երրորդ խմբի ժամանականիշ վերջավորությունները ևս երկու ենթախումբ են կազմում: Կատարյալի գրաբարյան ներգործաձև դիմորոշ թեքույթներն են՝ *ի, եր, Ø, աք, էք, իք, ին:* Դրանց միջինհայերենյան փոփոխությունները (հոգնակի 1-ին դեմքում *ն* հնչյունի հավելում և եզակի 3-րդ դեմքում *եաց>եց* հնչյունական անցում) իրենց արտացոլումն են գտել բարբառներում *(ուզէցի, ուզէցիր, ուզէց, ուզէցինք, ուզէցիք, ուզէցին)*: Գրաբարյան կատարյալի դիմանիշները առավել անփոփոխ են պահպանված Մալաթիայի և Համշենի բարբառներում, որոնցում հոգնակի 1-ին դեմքում *ն* հնչյունի հավելում չի կատարվել, այսպես՝ *խըմէծի, խըմէծիր, խըմէծ, խըմէծաք, խըմէծիկ, խըմէծին*.

Անցյալ կատարյալի գրաբարյան կրավորաձև ցուցիչները ևս միջին հայերենում ենթարկվել են փոփոխության: Եզակի 1-ին և հոգնակի 2-րդ դեմքերի *յ* կիսաձայնը դուրս է ընկել: Վերոհիշյալ փոփոխությունից հետո հոգնակի 2-րդ և 1-ին դեմքերի վերջավորությունները նույնացել են: Դրանց ձևային տարբերակման հարցը հավանաբար լուծվել է *ն* ձայնորդի հավելմամբ: Թերևս նախապես կատարվել է հոգնակի 2-րդ դեմքի դիմային վերջավորության ձևափոխությունը՝ *այք>աք*, որից հետո միայն հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի համանունությունից խուսափելու համար ներկայի հոգնակի 1-ին դեմքի համաբանությամբ տեղի է ունեցել *ն* ձայնորդի հավելում: Սրանից հետևում է, որ վերոնշյալ փոփոխությունը նախապես կատարվել է կրավորաձև խոնարհման ենթարկվող բայերում: Հայերենի բարբառային տարբերակների մի մասում (Մալաթիա, Խարբերդ, Համշեն) պահպանված են կատարյալի հարացուցային ձևերում հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի համանունության օրինակներ *(խախցա, խախցար, խախցավ, խախցաք, խախցաք, խախցան)*, և լեզվական հիշյալ փաստը հնարավորություն է ընձեռում տեսնելու դիմային փոփոխությունների զարգացման գործընթացը, նաև հիմնավորելու վերոնշյալ վարկածը:

Հարավարևելյան բարբառախմբի Խոյ-Մարաղայի և արևելյան բարբառախմբի Ագուլիսի բարբառներում կատարյալի եզակի 1-ին դեմքում գործառում է *ամ* դիմանիշ ցուցիչը *(խըմամ, խըմար, խըմավ...)*: Անցյալ կատարյալի նմանատիպ կազմություն է առկա նաև Վան (Ալյուր), Բերկրի (Քռներ), Աղբակ (Վանք, Հասպստան), Մոկս (Հաղին) բարբառային գոտու սակավաթիվ բնակավայրերի խոսվածքներում: Աստրախանի բարբառում *մ* դիմորոշ թեքույթը առկա է նաև անցյալ անկատարի 1-ին դեմքում՝ *հիմ, հիր, էր:* Քանի որ տարածքային տարբերակների զգալի մասում ներկան և անցյալ անկատարը կազմության միևնույն ձևաբանական տիպն ունեն և պատմական նույն զարգացումը, հավանաբար նախապես *մ* ձայնորդի հավելումը բնորոշ է եղել անցյալ անկատարի բայաձևերին, այնուհետև դրանց համաբանությամբ անցյալ կատարյալում ևս գործածվել է *մ* դիմանիշը:

Դիմաքվանիշների հաջորդ խումբը հրամայականի վերջավորություններն են: Բարբառներում գրաբարի ներգործաձև խոնարհման

թեքույթները կրել են հնչյունական փոփոխություններ՝ *եա>է, ա>°, ո>ու:* Հոգնակիի *-էք* վերջավորությունը գործառում է *էք* և *իք* փոփոխակներով: Գրաբարի հրամայականի կրավորաձև և խառն խոնարհման դիմանիշները բարբառային միավորներում դարձել են միօրինակ: Վերացել է չեզոք սեռի *ի* լծորդության բայերի եզակի *-եաց* վերջավորությունը, և եզակիի համար ընդհանրացել է *ի*-ն, որն առաջացել է *ր*-ի անկմամբ: *Իր* դիմանիշը նույնպես ենթարկվել է հնչյունական փոփոխությունների. առկա է վերջնահանգ *ր* ձայնորդի անկում՝ *իր>ի*, ինչպես նաև դրան նախորդող *ի* հնչյունի փոփոխություն: Հոգնակի թվում *եայք>էք* հնչյունափոխությամբ պահպանվել է *էք*-ը, և վերացել են հոգնակիի զուգաձևերը:

Արգելական հրամայականի դիմաթվային թեքույթները *(ար, եր, իր, ուր, այք, էք, իք)* տարածքային տարբերակներում գործածվում են *°//ա, ի, ու, °ք//աք, էք* տարբերակներով: Սրանից հետևում է, որ *ա* լծորդության բայերի արգելական հրամայականի եզակի թվի *ար (նաև եր, իր)* վերջավորությունից դուրս է ընկել *ր* ձայնորդը, իսկ *ա* ձայնավորը որոշ բարբառներում քմայնացել է: Հոգնակի թվում սղվել է *յ* կիսաձայնը: *Ե(է)* լծորդության բայերի եզակի թվի *եր* վերջավորությունը փոխվել է *ի*-ի: Վերջինիս և *իր* դիմաթվանիշի վերջնահնչյունի անկման հետևանքով նույնացել են *ե(է)* և *ի* լծորդությունների եզակի թվի ձևերը՝ *ի*: Այս երկու լծորդությունների համար ընդհանրացել է նաև հոգնակի թվի *էք* վերջավորությունը *(մի՛ հասնէք, մի՛ լըսէք)*:

Վերոբերյալից երևում է, որ տարածքային տարբերակներում հրամայական եղանակի ժամանակաձևերը, ըստ բայակազմության և լծորդությունների, կազմվում են անորոշի կամ կատարյալի նշույթավոր և աննշույթ հիմքերի և համապատասխան դիմաթվային թեքույթների *(է, ի, ա, ու, ր, օ, (է)ք, (ա)ք)* զուգորդմամբ:

Բարբառներում դերբայական բոլոր ձևերին որպես գործառական հատկանիշ բնորոշ է վերլուծական ժամանակաձևերի կազմությանը մասնակցելը, սակայն արևելահայ և արևմտահայ խմբակցություններում տարբեր է դրանց գործառության հաճախականությունը: Անորոշ դերբայը արևմտահայ խմբակցությունում որևէ ժամանակաձևի հետ չի կապվում, չի մասնակցում խոնարհմանը, բացառություն են կազմում ժխտական ներկայի և անկատարի ձևերը Համշենում և Նոր-Նախիջևանում *(չիմ (չէյը) կըրիլ (չեմ (չէի) գրում, չեմ (չէի) գրի)*, իսկ արևելահայ խմբակցությունում այն՝ որպես եղանակային ձևերի բաղադրիչ, լայն գործածություն ունի (սահմանական ներկա և անցյալ անկատար *(սիրէլ էմ)*, ենթադրական *(խըմիլ իմ (լ°լ)* «կխմեմ, կխմեի») և հարկադրական ապառնի ու անցյալի ապառնի *(ասիլ պէտէմ «պիտի ասեմ»*), արգելական հրամայական *(մընա՛լ մէ «մի՛ մնա»)*:

Արևելահայ խմբակցությանը բնորոշ անկատար և համակատար դերբայները *(գրում, գրելիս)*, որոնք գործառում են որպես սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի հիմնական զուգորդումների բաղադրիչ *(սիրում էմ (էի)*, *սիրաս էմ (իմ) (սիրում եմ (էի*), բացակայում են արևմտահայ խմբակցության բարբառներում, որտեղ ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմվում են եղանականիշ մասնիկով:

Անկատարի -*ում* ձևույթը գործածվում է *ում (սիրում), ըմ (սիրըմ), ամ (սիրամ), իմ (սիրիմ)* հնչյունափոխական տարբերակներով, որոնք առաջացել են *ու>ը, ու>°, ու>ա, ու>ի* ձայնավորական հերթագայությամբ:

*Ում>ըմ* հնչյունափոխությունը սկզբնապես տեղի է ունեցել վերջընթեր շեշտ ունեցող բարբառներում: Քանի որ օժանդակ բայը հայերենում շեշտակիր չէ, ուստի *ասում եմ (էի*) տիպի ձևերում շեշտը ընկնում է դերբայի վերջընթեր վանկի վրա (տվյալ դեպքում՝ *ա*-ի): Դրա հետևանքով թուլանում է վերջին վանկի վանկարար *ու* հնչյունի արտաբերությունը, և այն վերածվում է *ը*-ի: Վերջնավանկային շեշտ ունեցող բարբառներում *ում*–ի փոխարեն *ըմ*–ի առկայությունը կարելի է բացատրել վերջընթեր շեշտ ունեցող բարբառների ազդեցությամբ: Վերոնշյալից հետևում է, որ վերջնավանկային շեշտ ունեցող խոսվածքներում *-ըմ* վերջամասնիկով դերբայը ավելի ուշ շրջանի գոյացություն է: Անկատարի մյուս վերջամասնիկները առաջացել են ներդաշնակության օրենքով:

Համակատար դերբայը ևս տարածքային տարբերակներում մասնակցում է եղանակաժամանակային ձևերի կազմությանը ծառայելով որպես սահմանական ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի բաղադրիչ: Այն, բացի անհնչյունափոխ ձևից, գործառում է նաև *յիս, յս, ս, լ* տարբերակներով, որոնց համար ենթադրվում է զարգացման հետևյալ ընթացքը՝ *լիս>յիս>յս* (շեշտազուրկ *ի*-ի անկմամբ և ոչ թե *ի>յ* փոփոխությամբ)>*ս* կամ *յ՝ մընալիս>մընայիս >մընայս>մընաս* կամ *մընայ*:

Բարբառների երկու խմբակցություններում էլ գործածվում է վաղակատար դերբայը՝ կազմելով վաղակատար ժամանակաձևեր: Սակայն այն հատկանշվում է ձևային տարբերությամբ: Արևելահայ խմբակցության բարբառների վերջնահնչյուն լ ձայնորդի դիմաց *(գըրէլ էմ (էյի)* արևմտահայ խմբակցությունում առկա է *ր (յ)*-ն *(կըրիր (կըյիյ) էմ (էի*):

Հայերենի տարածքային տարբերակներում գործածվում են հարակատար դերբայի փոփոխակներ՝ երեք վերջամասնիկներով՝ *ած, ուկ* և *ման*: Հարակատար դերբայը ևս բարբառներում մասնակցում է ժամանակաձևերի կազմությանը: Նրա և օժանդակ բայի զուգորդությունները արտահայտում են վաղակատար և հարակատար ժամանակաձևերի իմաստներ *(խապված իմ (էի) «խաբվել եմ (էի)* և *խաբված եմ (էի)»)*:

Ապառնի դերբայը, բարբառների երկու խմբակցությունում էլ ունենալով ձևային ընդհանրություններ, բնորոշվում է նաև իմաստային նույնությամբ՝ կազմելով սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևեր *(մընալու էմ (էի)*: Սակայն արևմտահայ խմբակցությունում, ի տարբերություն արևելյանի, ապառնի դերբայով ժամանակաձևերը սակավադեպ են:

Բարբառներում գործառում են ապառնի դերբայի մի քանի տարբերակներ՝ *-ու (ú, օ), -ի, -ա, -ան, -́ց (եց), -ացու (ացուկ), -ական (ասկան, ացկան*) ձևույթներով վերջավորվող: Սրանք առաջացել են անորոշ դերբայի սեռական հոլովաձևից *(կատարելէց, աղալա)* կամ կազմվել են ածանցմամբ *(մընըլացուկ, խըմըլական, մընըլասկան (մընալու), ըղըլասկան (աղալու)* և գործածվում են միայն արևելյան խմբակցության բարբառային միավորներում:

Ենթակայական դերբայը տարածքային տարբերակների գերակշիռ մասում եղանակաժամանակային ձևերի կազմությանը չի մասնակցում: Այս առումով բացառություն է Համշենի բարբառը, որտեղ այն ապառնիության գաղափար է արտահայտում՝ կազմելով սահմանական և ենթադրական ապառնիների և անցյալի ձևեր *(ասօղ ըմ «ասելու եմ, կասեմ»)*:

Ժխտական դերբայը, ինչպես հայտնի է, առաջացել է անորոշից: Բարբառներում առկա են այդ հնչյունական անցման օղակները՝ վերջնահնչյունի փոփոխություն՝ *լ>ր (մընար)*, ինչպես նաև լծորդակիր ձայնավորների հնչյունական անցումներ՝ *ե(է)>ի (խընայի), է>ը (տըփը), ա>օ (խաղօ)*: Ժխտական դերբայով և օժանդակ բայով հարադրությունները ձևավորում են եղանականիշ *(կու, կա, հա)* մասնիկով ժամանակաձևերի ժխտական կազմությունները: Արևելյան խմբակցության բարբառներում դրանք ենթադրական եղանակի ժխտական խոնարհման ձևերն են, իսկ արևմտյան խմբակցությունում՝ նաև սահմանական ներկայի և անցյալ անկատարի:

Օժանդակ բայի անցյալ ժամանակը բարբառային միավորներում դրսևորվում է պարզ և բաղադրյալ ձևերով: Արևմտյան և արևելյան խմբակցության բարբառների մեծ մասին բնորոշ են օժանդակ բայի պարզ ձևերը: Դրանք գործառում են հնչյունական զանազան տարբերակներով և հիմնականում նույնանում են անցյալ ժամանակաձևեր կազմող դիմաթվային վերջավորությունների հետ, որոնք արդեն ներկայացվել են:

Օժանդակ բայի բաղադրյալ ձևերը, հարադրվելով ներկա ժամանակաձևերին, դրսևորում են անցյալ ժամանակի իմաստ՝ գործածվելով որպես ժամանականիշ մասնիկներ: Դրանք ընդգրկում են արևելյան խմբակցության հարավարևելյան բարբառախմբի Խոյ-Մարաղայի, ծայրհյուսիսարևելյան միջբարբառախմբի Ղարաբաղի, Բուրդուրի, Ագուլիս-Մեղրիի բարբառները:

*Կու* եղանականիշ մասնիկը տարածքային տարբերակներում գործածվում է անհնչյունափոխ *(կու մընամ)* և հնչյունափոխված ձևերով: Դրա փոփոխակները առաջացել են ձայնավորական հնչյունափոխությամբ *(կը խօսէր)*, սկզբնահնչյունի ձայնեղացմամբ *(կըրիմ գու)* կամ վերջնաձայնավորի *(գասիմ)* անկմամբ: *Կա* եղանականիշը, ենթարկվելով բաղաձայնական և ձայնավորական միաժամանակյա փոփոխությունների, բարբառային միավորներում գործառում է *գօ (գօ սիյիմ)* և *գու* հնչյունական տարբերակներով *(գու սիրիմ)*:

Արևմտյան տարածքի բարբառներում շարունակական ներկայի և անցյալ անկատարի իմաստները դրսևորվում են *կոր, էր, դար, ունի//գունի, հայէ, հայկակ* ժամանականիշ մասնիկների միջոցով: *Կոր* մասնիկը գործառում է *գօր (գօր կըրիմ), օր (գը գարթամ օր)* տարբերակներով: *Հայէ* ժամանականիշ մասնիկի դիրքային տարբերակները առաջացել են վերջնահնչյունի *(ուտիմ հայ)* կամ սկզբնահնչյունի *(գըբաքնէմ ա)* անկմամբ և *ա>ը* ձայնավորական փոփոխությամբ *(գըկըրիմ ը)*:

*Պիտիմ* բայը տարածքային տարբերակներում ենթարկվում է բաղաձայնական *(պ>բ, պ>մ)*, ձայնավորական *(ի>ը)* փոփոխությունների, սկզբնավանկի *(պիտիմ-դէմ)*, վերջնահնչյունի *(պիտիմ-պիտի)* անկման: Բարբառների մյուս խմբում գործածվում է *պիտիմ* բայի վերջնահնչյունի

անկմամբ առաջացած *պիտի* եղանականիշ մասնիկը: Այն նույնպես փոփոխություններ է կրել, որոնք ընթացել են հետևյալ ձևերով՝ սկզբնահնչյունի ձայնեղացում *(բիդի, բըդի, բըդը)*, ձայնավորների փոփոխություն *(պըտի, բէդա, բիդի)*, վերջնահնչյունի անկում նախ՝ *ի (պիդ ուդիմ, պիդ ուդէս, պիդ ուդէ)*, հետո՝ *դ* հնչյունների *(պի՛ըրէմ, պի՛ըրէս, պի՛ըրէ)*, առաջին վանկի սղում *(տըսիրիմ «պիտի սիրեմ»)*: Բարբառային մի շարք միավորներում ապառնիության իմաստ արտահայտող մասնիկները *(կըպա, գըմ·ի)* երկու տարբեր բաղադրիչների *(կը* և *պիտի)* համադրման հետևանք են:

Այսպիսով, տարածքային տարբերակներում եղանականիշ և ժամանականիշ մասնիկները գործառում են դիրքային բազմաթիվ տարբերակներով, որոնք հնչյունական փոփոխությունների, սկզբնամասի կամ վերջնամասի անկման կամ էլ տարբեր բաղադրիչների համադրման հետևանք են: Հաճախ վերոնշյալ փոփոխությունները գործում են միաժամանակ:

Երրորդ գլխում («Բարբառների եղանակաժամանակային կաղապարների կառուցվածքային-զուգադրական քննություն») կատարվում է եղանակաժամանակային ձևերի կառուցվածքային կաղապարների զուգադրական քննություն, տրվում են դրանց տարածական-գործառական բնութագիրը, ընդհանուր պատկերը, առանձնահատկություններն ու բնորոշ գծերը, ձևաբանական կառուցվածքի նկարագիրը, նշվում են բարբառային խմբերի տարածման սահմանները:

Բարբառներում միմյանց հակադրվում է 5 եղանակաձև՝ սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական և հրամայական: Արևելյան խմբակցության բարբառները հատկանշվում են եղանակային 5 ձևերով: Սյս խմբակցությունում, ի տարբերություն արևմտյանի, ապառնիության իմաստային բոլոր դրսևորումները ձևային տարբեր արտահայտություններ, հետևաբար նաև կաղապարային առանձին կառույցներ ունեն: Արևմտյան խմբակցության բարբառներում, ի տարբերություն արևելյանի, խոնարհումը կատարվում է 3 կամ 4 եղանակային ձևերով, քանի որ դրանցում բացակայում է ապառնիության իմաստի դրսևորման այս կամ այն ձևը:

Երրորդ գլխի ենթագլուխներից մեկը վերաբերում է սահմանական եղանակի ժամանակաձևերի քննությանը: Սահմանական եղանակը տարածքային տարբերակներում բնորոշվում է երեք ժամանակների արտահայտությամբ և վերլուծական ու համադրական ժամանակաձևերի առկայությամբ ինչպես դրական, այնպես էլ ժխտական խոնարհման հարացույցներում, սակայն տարբերվում է վերլուծական և համադրական ժամանակաձևերի համամասնությամբ: Արևելյան խմբակցության բարբառներում սահմանական եղանակը հատկանշվում է 9 ժամանակային ձևերով: Դրանցից 8-ը վերլուծական ժամանակաձևեր են, իսկ մեկը՝ համադրական: Վերլուծական կառուցվածք ունեն ներկան և անցյալ անկատարը, ապառնին ու անցյալի ապառնին, վաղակատար, հարակատար ներկան ու անցյալը, համադրական՝ անցյալ կատարյալը (որոշ վայրերում՝ վերլուծական): Արևմտյան խմբակցության բարբառներում պատկերն այլ է:

Այստեղ վերլուծական կառուցատիպեր են գործածվում նաև ներկա և անցյալ անկատար, ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերում[11]:

Հայերենի տարածքային տարբերակներում ներկայի և անցյալ անկատարի արտահայտության կաղապարային տարբեր կառույցներ են գործառում՝ *դերբայ+օժանդակ բայ, հինհայերենյան ներկա-անցյալ անկատար, հինհայերենյան ներկա-անցյալ անկատար+եղանականիշ մասնիկ կամ եղանականիշ մասնիկ+հինհայերենյան ներկա-անցյալ անկատար*: Տարածքային տարբերակների մի հատվածում հիշյալ կազմությունները գործածվում են միաժամանակ: Նկատի ունենալով սա՝ կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը՝ դերբայակազմ, մասնիկակազմ, դերբայակազմ-մասնիկակազմ, գրաբարատիպ-մասնիկակազմ, գրաբարատիպ-դերբայակազմ, և բարբառային 5 տարածք[12]:

Առաջին տարածքը ընդգրկում է դերբայակազմ խումբը, որտեղ ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը կազմվում են *-ում (գըրըմ ըմ), -լիս (մընաս ըմ), -լ (կըրէլ էմ)* վերջամասնիկներով դերբայների և օժանդակ բայի հարադրությամբ: Դա նկատի ունենալով ՝մեր կողմից սահմանագծվում է 3 ենթատարածք:

Մասնիկավոր կազմությամբ տիպը զբաղեցնում է երկրորդ տարածքը՝ ընդգրկելով արևմտյան խմբակցության բարբառները: Սրանցում եղանականիշ մասնիկը բաղադրվում է ըղձական ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերին՝ այդ կերպ դրսևորելով ներկայի և անցյալ անկատարի ժամանակաիմաստները: Ըստ դիմավոր բայաձևերին հարադրվող բառ-մասնիկների *(կու (գը մընամ), կա (գա խուսիմ), հայէ (խըմիմ ը)* առկայության՝ սահմանազատել ենք բարբառային երեք ենթատարածք:

Դերբայակազմ-մասնիկավոր տիպը ընդգրկում է արևելյան խմբակցության Արդվին-Թբիլիսիի, արևմտյան խմբակցության Բուն Սասունի (Հոսներ, Արփի) բարբառները: Սրանցում որպես ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևեր զուգահեռաբար գործածվում են դերբայով կամ եղանականիշ մասնիկով բաղադրված կազմությունները *(գըսիրըմ//սիրիլ իմ)*:

Գրաբարատիպ-մասնիկավոր տիպի մեջ մտնող բարբառային միավորների (Խոտրջուրի բարբառ, Արամոյի խոսվածք) ներկա և անցյալ

[11] Ինչպես գրական լեզուներում, բարբառներում ևս ներկա և անցյալ անկատար, ապառնի և անցյալի ապառնի, վաղակատար ներկա և անցյալ, հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևերում գործառում են միևնույն բայահիմքերը կամ դերբայները: Տարբերությունը դիմաթվանիշ վերջավորությունների կամ օժանդակ բայի ժամանակաձևերի մեջ է: Այդ պատճառով էլ նույնություններից խուսափելու համար դրանք ներկայացվում են միասին:

[12] Տարածքը պայմանական անվանում է և չի նույնանում «աշխարհագրական տարածք» հասկացության հետ: Տարածք կազմում են բարբառային այն տարբերակները, որոնք միավորվում են որևէ զուգաբանությամբ: Բարբառային տարածքի մեջ մտնող միավորները աշխարհագրորեն կարող են հեռու լինել միմյանցից:

անկատար ժամանակաձևերը բնորոշվում են մասնիկավոր և գրաբարաձև կազմությունների զուգահեռ գործածությամբ *(մընամ//կաղամ)*:

Գրաբարատիպ-դերբայակազմ տիպն են կազմում Կռզենի բարբառը, Լոռու, Շամշադին-Դիլիջանի, Թովուզի խոսվածքները, որոնցում գրաբարատիպ և դերբայավոր կազմությունների զուգաձևություն է առկա միայն անցյալ անկատարի խոնարհման հարացույցում: Սրանցում անցյալ անկատարի գրաբարաձև. կազմություններին *(խօսի «խոսում էի»)* զուգահեռ գործածվում են դերբայակազմ ձևեր *(խօսըմ ի «խոսում էի»)*: Այս երևույթը բացակայում է դրանց ներկայի կազմություններում, որոնք դերբայակազմ են *(սիրում եմ)*:

Բարբառների արևմտյան խմբակցությունում, ինչպես ասվել է, գործածվում են շարունակական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևեր, որոնք այդ իմաստները արտահայտում են ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի և ժամանականիշ մասնիկների *(կոր, էր, դար, ունի//գունի, հայէ, հայկակ...)* զուգորդությամբ: Վերջիններս, ի տարբերություն ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի եղանականիշ մասնիկների, գործառականորեն բազմարժեք չեն, կիրառվում են միայն սահմանական եղանակի տիրույթում՝ ձևավորելով նրա շարունակական ենթիմաստը: Նկատի ունենալով շարունակական մասնիկների՝ ծագումնաբանորեն նույն նախաձևից առաջացած լինելը՝ մեր կողմից առանձնացվել են 5 տարածքներ, որոնցում գործառում են վերոնշյալ մասնիկներով բաղադրությունները՝ *գը մընամ գօր, գուդիմ օր, բէրիմ գունի, կը բաքնէմ դար, գէու առնիմ, գըգարթամ հայէ*…:

Հայ բարբառագիտության մեջ ընդունված է առանձնացնել շարունակական ժամանակներ ունեցող բարբառների երկրորդ՝ դերբայավոր խումբը: Դրանցում շարունակական ժամանակների բաղադրիչ համարվում է անորոշ դերբայի գործիական հոլովաձևը, որը, օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերի հետ զուգորդվելով, ցույց է տալիս տևական գործողության հարաբերությունը ներկա կամ անցյալ ժամանակակետի հետ: Նման կիրառություն է նշվել Ղարաբաղի և Հավարիկի բարբառներում, սակայն անորոշ դերբայի գործիական հոլովաձևով և օժանդակ բայով կազմությունները նշված տարածքում ունեն սահմանափակ կիրառություն և արտահայտում են ստորոգյալի գործողությանն անմիջապես նախորդող գործողություն, այսինքն՝ դրանց հատուկ չէ շարունակական ժամանակաձևերին բնորոշ, խոսելու պահին սկսված գործողության իմաստը: Հետևաբար գիտականորեն հիմնավորված չէ Ղարաբաղի խոսվածքներում շարունակականի հատուկ ձևերի առանձնացումը: Դերբայով և օժանդակ բայով կազմված այդ կաղապարները «ժամանակային ձևեր չեն և պետք է ներկայացվեն խոնարհման հարացույցից առանձին»[13]:

Անվիճելի է, որ հայերենի տարածքային բոլոր դրսևորումներում շարունակվող գործողության ըմբռնումն ու գիտակցումը եղել է, սակայն բոլոր վայրերում չէ, որ այն ստացել է ձևային համապատասխան արտահայտություն: Բարբառային այն միավորներում, որտեղ շարունակական ներկան և անցյալ անկատարը չեն գործառում որպես ձևաիմաստային միավոր, շարունակականի իմաստն արտահայտվում է ներկայի և անցյալ անկատարի բայաձևերին կցելով *ահա, այժմ* իմաստն ունեցող տարբեր բառեր՝ *հիմկա, հիմիգ, հրես, գօ, հանդէ* և

---

[13] **Ա. Խաչատրյան,** նշվ. աշխ., 1982, էջ 101:

այլն: Սրանք, սակայն, մասնիկի արժեք չունեն, ինքնուրույն բառեր են, հետևաբար դրանցով զուգորդված կազմությունները չեն կարող դիտվել որպես շարունակականի ձևեր. «շարունակականի դեպքում բացառվում են ինքնուրույնությունը չկորցրած զանազան բառերով անմիջականացվող ներկայի ձևերը»[14]: Կարծում ենք ` շարունակական ներկա և անցյալ անկատար կարելի է ընդունել այն վայրերում, որտեղ պատմականորեն գոյություն ունեն այդ իմաստն արտահայտող մասնիկներ: Հարկ է վերապահությամբ մոտենալ բարբառային այն միավորներին, որոնցում շարունականականի ցուցիչները ժամանակի ընթացքում դարձել են ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստակիրներ, և դրանցում գործառող մասնիկները շարունակականի ցուցիչներ համարել միայն այն դեպքում, երբ անհրաժեշտ է պահպանել պատմականության սկզբունքը:

Տարածքային տարբերակների ներկայի և անցյալ անկատարի համաժամանակյա և տարաժամանակյա դրսևորումների զուգադրական քննությունից պարզ է դառնում, որ բարբառային միավորներում դրանց զարգացումը ունեցել է հետևողականորեն արտահայտված մի շարք հաջորդական փուլեր: Հավանաբար ներկայի և անցյալ անկատարի նորակազմ ձևերը նախապես արտահայտել են խոսելու պահին կատարվող գործողության իմաստ, այսինքն՝ գործածվել են իբրև շարունակական ներկայի և անցյալ անկատարի ձևեր: Հետագայում դրանք ձեռք են բերել ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստ, իսկ ավելի ուշ՝ ապառնիի: Այս բազմիմաստությունն էլ ամենայն հավանականությամբ պատճառ է դարձել ներկայի և անցյալ անկատարի նոր կազմությունների առաջացման, որոնք անցել են զարգացման միևնույն ուղին: Սա թերևս հայոց լեզվի պատմության կարևոր օրինաչափություններից մեկն է:

Այս ենթագլխում հաջորդաբար քննվում են նաև սահմանական եղանակի մյուս ժամանակաձևերը: Հայերենի բարբառներում վաղակատար ժամանակի իմաստը դրսևորվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի (ներկա և անցյալ) խոնարհված ձևերի հարադրությամբ, ինչպես նաև հարակատար դերբայի և օժանդակ բայի խոնարհված ձևերի զուգորդությամբ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ առանձնացնում ենք բարբառային երկու տարածք: Առաջին տարածքում վաղակատար դերբայի ՝ *-ել (էլ, իլ ՝Ï³ ñÃ³ ó¿É¿Ù (իմ իդի), -եր (էր, իր, իյ ՝ËÁÙ¿ñ ÇÙ(¿Ç ), -ալ (°լ Ìըր°լ էմ (իմ))* վերջամասնիկներով փոփոխակների առկայությունը հնարավորություն է ընձեռում սահմանազատելու երեք ենթատարածք:

Բարբառային երկրորդ տարածքում վաղակատար ժամանակի իմաստն արտահայտվում է հարակատար դերբայով և օժանդակ բայով բաղադրված կազմություններով *(սիրած իմ (էի)*: Հավանաբար հարակատար դերբայի այս գործառությունը նախապես բնորոշ է եղել անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությամբ հատկանշվող բարբառներին՝ որպես տվյալ տարածքին բնորոշ բարբառային իրողություն, իսկ ավելի ուշ համաբանությամբ ընդգրկել է նաև բարբառային այլ միավորներ:

---

[14] **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 106:

Հայերենի բարբառներում հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևերի իմաստները արտահայտվում են հարակատար և վաղակատար դերբայների և օժանդակ բայի խոնարհված ձևերի հարադրությամբ: Հիշյալ զուգորդությունները իմաստային տարբեր դրսևորումներով և գործառական հաճախականությամբ են գործածվում: Այս տեսակետից կարելի է տարբերակել բարբառային երեք տարածք:

Առաջին տարածքում առանձնացնում ենք երկու ենթատարածք: Առաջին ենթատարածքում հարակատար դերբայով բաղադրված ժամանակաձևերը *(նըստըցըրած էմ (ի)* հատուկ են կրավորական և չեզոք սեռի այն բայերին, որոնց ցույց տված գործողությունը հատկանշվում է հետևանքային առումով: Երկրորդ ենթատարածքում հարակատար ներկա և անցյալ ժամանակաձևեր են կազմվում նաև ներգործական սեռի բայերից *(գըրած էմ (էյի)*:

Բարբառային երկրորդ տարածքում հարակատար դերբայը ժամանակային ձևերի կազմությանը մասամբ է մասնակցում. գործածվում է միայն եզակի և հոգնակի 3-րդ դեմքերում` *կըյեյ եմ (ի իդի), կըյեյ ես (իյ իդի), կըյեյ//կըյօծ է (էյ իդի), կըյեյ էնք (օնք իդի), կըյեյ էք (իք իդի), կըյեյ//կըյօծ են (ին իդի)*: Հավանաբար նախապես վերոնշյալ բարբառային միավորներում հարակատար դերբայով բաղադրությունները դրսևորել են վաղակատար ներկայի և անցյալի ժամանակային իմաստներ, իսկ հետագայում ծավալային սահմանափակմամբ պահպանվել են միայն 3-րդ դեմքում:

Երրորդ տարածքի բարբառային միավորներում բացակայում են վաղակատար դերբայով կազմությունները, և վաղակատար ժամանակների իմաստով գործածվում են հարակատար դերբայով կառուցատիպերը` արտահայտելով վաղակատար և հարակատար ներկա ու անցյալ ժամանակաձևերի իմաստներ *(խըմած ըմ (լ°լ) «խմել եմ (էի) և խմած եմ (էի)»):*

Տարածքային տարբերակներում անցյալ կատարյալ ժամանակաձևը` հատկանշվում է կառուցվածքային 2 կաղապարներով: Սա նկատի ունենալով առանձնացնում ենք բարբառային երկու տարածք: Առաջինում գործածվում են անցյալ կատարյալի պարզ կազմությունները *(խըմի, խըմիր, խըմէց…)*, որոնք կազմվում են անորոշի կամ անցյալի հիմքերի և դիմաթվանիշ թեքույթների զուգորդությամբ: Դրանք կիրառվում են հայերենի տարածքային տարբերակների գերակշիռ մասում ` բարբառների արևմտյան խմբակցությունն ամբողջությամբ, ինչպես նաև արևելյան խմբակցության զգալի մասը: Անցյալ կատարյալի բաղադրյալ ժամանակաձևերի կազմությամբ է հատկանշվում բարբառային երկրորդ տարածքը, որտեղ անցյալ կատարյալի ժամանակաիմաստը դրսևորվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ *(խըմալ ըմ «խմեցի»):*

Հիշյալ տարածքում անցյալ կատարյալի բաղադրյալ կազմության գործածությունը, անշուշտ, պայմանավորված է մի շարք գործոններով և պատմական երկարատև գործընթացի արդյունք է: Հավանաբար նախապես, երբ բարբառների հնչյունական և ձևաբանական հատկանիշները դեռ նոր էին սկսում գծագրվել, գրաբարյան անցյալ կատարյալն ընդգրկել է հայերենի ողջ տարածքը: Հետագայում միայն` հին շրջանում գոյություն ունեցող բարբառային տարբերությունների խորացմանը զուգընթաց, հայերենի տարածքային տարբերակները անցյալ կատարյալի իմաստն արտահայտել են ձևաբանական տարբեր միջոցներով: Դրանց մեծ մասում շարունակել է գործածվել

գրաբարյան անցյալ կատարյալը: Սակավաթիվ բարբառային միավորներ միայն, շեղվելով գրաբարյան անցյալ կատարյալի կազմության օրինաչա-փություններից և հավանորեն կրելով հինհայերենյան խոնարհման համակարգի գործառական և իմաստային փոփոխությունների ազդեցությունը, որպես անցյալ կատարյալի կազմության հիմնական ձև, կիրառել են անցյալի իմաստն արտահայտող մեկ այլ կառուցատիպ՝ վաղակատար դերբայով և օժանդակ բայով հարադրված: Հավելենք, որ անցյալ կատարյալի բաղադրյալ կազ-մությամբ հատկանշվող տարածքային տարբերակներում գործում է մի ընդհա-նուր միտում. դրանցում բացակայում են վաղակատար դերբայով ժամանա-կաձևերը: Այն հավանորեն կապվում է դրանց՝ անցյալ կատարյալի հարացույցում գործածության հետ: Վաղակատար ժամանակների իմաստով հիշյալ բարբառային գոտում, ինչպես նշվել է, գործածվում են հարակատար դերբայով կազմությունները [illegible] հարակատար ներկա ու անցյալ ժամանակաձևերի իմաստներ:

Հայերենի տարածքային միավորներում *ե(է)* և *ի* լծորդության պարզ բայերը անցյալ կատարյալի հարացույցում գործառում են ներգործաձև *(լըսէցի)* և կրավորաձև *(նըստա)* վերջավորություններով կամ դրանց զուգահեռ կիրառմամբ *(նըստէցի//նըստա)*: Դիմաթվանիշ թեքույթների զուգահեռ գործածությունը գերազանցապես պայմանավորված է բայերի սեռային պատկանելությամբ: Ներգործական սեռի բայերը ստանում են ներգործաձև, իսկ կրավորական և չեզոք սեռի բայերը՝ կրավորաձև վերջավորություններ: Այն կարող է պայմանավորված լինել նաև լծորդությամբ. գրաբարյան *ի* լծորդության բայերի մի խումբ բարբառային որոշ վայրերում պահպանել է *ի* լծորդությունը, հետևաբար և գրաբարյան *ի* լծորդության բայերին հատուկ կրա-վորաձև վերջավորությունները:

Անցյալ կատարյալի կազմությամբ հակադրվում են բարբառների արևելյան և արևմտյան խմբակցությունները: Եթե արևմտյան խմբակցության բարբառներում անցյալ կատարյալը հատկանշվում է պարզ կազմությամբ, ապա արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի խոսվածքային որոշ միավորներում (Շաղախ, Հադրութ, Ղարադաղ) և Ագուլիս-Մեղրիի բարբառախմբում անցյալ կատարյալի ժամա-նակաիմաստը դրսևորվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ *(խըմալ ըմ)*:

Բարբառային միավորներում սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի իմաստները դրսևորվում են կաղապարային երկու կառույցով՝ *դերբայ+օժանդակ բայ, եղանականիշ մասնիկ+բայի դիմավոր կամ անդեմ ձև*: Նկատի ունենալով սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի կազմության վերոհիշյալ սկզբունքները՝ կարելի է առանձնացնել երկու տիպ՝ դերբայակազմ և մասնիկակազմ, ու սահմանազատել բարբառային երկու տարածք:

Առաջին տարածքում (դերբայակազմ) առանձնացնում ենք երկու ենթատարածք՝ սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի հարա-ցույցներում տարբեր դերբայների (ապառնի, ենթակայական) գործածությամբ պայմանավորված: Երկրորդ տարածքի բարբառային միավորները (մասնիկակազմ) սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի իմաստները դրսևորում են եղանականիշ մասնիկների և բայի դիմավոր կամ անդեմ ձևերի զուգորդությամբ *(պի խըմիմ «խմելու եմ և պիտի խմեմ», կը մըՊ մ «մնալու եմ և*

*կմնամ», կըպա մընամ «մնալու եմ և կմնամ»)*: Նկատի ունենալով եղանականիշ տարբեր մասնիկների *(պիտիլ, կը, կըպա, գըմ ի)* գործածությունը՝ մեր կողմից առանձնացվում է 3 ենթատարածք:

Սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերի զուգադրական քննությունից երևում է, որ ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան խմբակցության բարբառներում գործածվում են վերլուծական կազմություններ: Արևելյան խմբակցությունում այդ կազմությունները սահմանափակվում են սահմանական եղանակի իմաստային տիրույթով, իսկ արևմտյան խմբակցությունում դրանք գործառում են սահմանական, ենթադրական և հարկադրական եղանակների հարացույցներում:

Հաջորդ ենթագլխում ներկայացվում են ըղձական եղանակի ժամանակաձևերը: Ըղձական ապառնիի բայաձևերը բարբառների արևելյան և արևմտյան խմբակցություններում համադրական կառուցվածք ունեն, դրսևորվում են գրաբարյան ներկայի տիպի բայաձևերով և բացի հնչյունական փոփոխություններից՝ ձևային այլ տարբերակվածություն հանդես չեն բերում: Ըղձական եղանակի անցյալի ապառնիի իմաստը դրսևորվում է համադրական կազմության մեկ (հինհայերենյան անցյալ անկատար տիպի բայաձևերով՝ *աղի, աղիր, աղէր)* և վերլուծական կազմության երկու կառուցատիպերով՝ հինհայերենյան անցյալ անկատար տիպի բայաձևերով և ժամանականիշ մասնիկներով *(սէրիմ լ° «սիրեի», խօսէմ էր «խոսեի»)*, գրաբարյան անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքի բայաձևերով ու դիմային վերջավորություններով: Ըստ այս հատկանիշի՝ առանձնացրել ենք բարբառային երկու տարածք:

Մյուս ենթագլխում տրվում է ենթադրական եղանակի նկարագիրը: Ենթադրական եղանակի ժամանակային իմաստները դրսևորվում են երկու կառուցատիպերով՝ *ըղձական եղանակի ժամանակաձև+կու, կա եղանականիշ մասնիկներ* (կամ նրանց տարբերակներ), ինչպես նաև *անորոշ դերբայ+օժանդակ բայի ներկա կամ անցյալ ժամանակաձև*: Վերոնշյալից ելնելով՝ կարելի է սահմանազատել բարբառային երկու տարածք և առանձնացնել երկու տիպ՝ մասնիկակազմ և դերբայակազմ:

Առաջին տարածքը (մասնիկակազմ տիպ) ընդգրկում է արևմտյան խմբակցության բարբառները և արևելյան խմբակցության բարբառների մեծ մասը: Սրանցում ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի կառուցվածքային կաղապարները կազմվում են *կու, կա* եղանականիշ մասնիկների կամ նրանց փոփոխակների և ըղձական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ժամանակաձևերի զուգորդությամբ: Այս տարածքը կազմող բարբառների մի հատվածում սահմանական ներկայի, անցյալ անկատարի և ենթադրական ապառնիի, անցյալի ապառնիի ժամանակաձևերի կառուցատիպերը կազմում են բազմիմաստության երկանդամ շարք *(կըխըմէմ «խմում եմ, կխմեմ»)* կամ բնորոշվում են ձևային տարբերությամբ *(գօ կըյիմ «գրում եմ», գու մօնօմ «կմնամ»)*: Սրանով պայմանավորված՝ մեր կողմից սահմանազատվում է երկու ենթատարածք:

Բարբառային նյութի դիտարկմամբ պարզ է դառնում, որ սահմանական եղանակի ներկայի, անցյալ անկատարի և ենթադրական եղանակի ապառնիի, անցյալ ապառնիի կազմությունների ձևային տարբերությամբ հատկանշվում են բարբառային այն միավորները, որոնցում նախապես գործածվել են շարու-

նակական ժամանակաձևեր: Հավանաբար հետագայում դրանք ընդլայնել են իրենց գործածության սահմանները՝ ձեռք բերելով ներկայի և անցյալ անկատարի մյուս (մասնավորապես՝ ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի) իմաստները՝ այդ կերպ լուծելով սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի կազմությունների ձևային տարբերակման խնդիրը: Ասվածը կարելի է հիմնավորել այն փաստով, որ բարբառային մի շարք միավորներում սկզբնապես միայն շարունակականի իմաստ արտահայտող ժամանակաձևերը զարգացման վերջին շրջանում ձեռք են բերել նաև ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ:

Երկրորդ տարածքը հատկանշվում է ենթադրական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի դերբայակազմ ժամանակաձևերով: Այս տարածքում դերբայակազմ են ինչպես սահմանական ներկայի և անցյալ անկատարի կազմությունները, այնպես էլ ենթադրական ապառնիինը և անցյալի ապառնիինը: Ենթադրական եղանակի ժամանակաձևերին բնորոշ է *անորոշ դերբայ և օժանդակ բայ* կաղապարային կառույցը *(խըմիլ իմ «կխմեմ»)*: Սրանք առանձնանում են ինչպես անցյալ կատարյալի կառուցվածքով (այն կազմում են վաղակատար դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ՝ *խըմալ ըմ «խմեցի»)*, այնպես էլ անցյալ ժամանակաիմաստն արտահայտող բառմասնիկի գործածությամբ *(մըռանիլ ըմ լ°լ «կմոռանայի»)*:

Հարկադրական եղանակի ժամանակաձևերը, որոնք նույնպես հատկանշվում են ապառնիի և անցյալի ապառնիի իմաստների հակադրությամբ, արևելահայ խմբակցության բարբառներում արտահայտում են հարկադրաբար, արևմտահայ խմբակցությունում՝ նաև (ավելի հաճախ) հաստատապես կատարելի գործողություն: Դրանք կազմվում են *պիտիմ* բայի կամ *պիտի* եղանականիշ մասնիկի (կամ փոփոխակների) և ըղձական եղանակի ժամանակաձևերի զուգորդությամբ, ինչպես նաև անորոշ դերբայով և *պիտիլ* բայի խոնարհված ձևերով: Վերոնշյալով պայմանավորված՝ կարելի է սահմանազատել բարբառային երկու տարածք և առանձնացնել տիպաբանական երկու խումբ՝ մասնիկակազմ *(պիտի գրեմ)* և դերբայակազմ *(Ìիրիլ պիտէմ)*:

Հրամայական եղանակի եզակի թվի ձևերը ե խոնարհման պարզ և ածանցավոր բայերի դեպքում կազմվում են *հր (հյ, էր՝ էլի՛ր, հասի՛յ, խօսի՛)* և *է (ա՝ էպա՛, խըմա՛, բըռնա՛, գըրա)* դիմորոշ թեքույթներով: Ա խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի իմաստը եզակի թվում դրսևորվում է կաղապարային հետևյալ կառույցներով՝ *անցյալի ցոյական հիմք+իր (ի)՝ աղծի՛ր, խաղծի՛ր*, և *ներկայի հիմք+ա(օ, ու)* դիմաթվային թեքույթներ՝ *խաղա՛, աղա՛*: Ա խոնարհման ածանցավոր բայերը հրամայական եղանակի ժամանակաձևերը կազմելիս գործածում են միայն կատարյալի ցոյական հիմքը՝ դիմորոշ թեքույթով *(մեցցի՛ր, մօդէցի՛ր, ուրախացի՛ր)* կամ առանց դրա *(տիմա՛ց, պիցիրա՛ց, լըվա՛ց)*: Հրամայական եղանակի հոգնակի թվի ժամանակաձևերում *ե* և *ա* խոնարհման բայերի ձևային տարբերությունը չեզոքացած է. դրանք *-էք* դիմաթվանիշ թեքույթը հավելում են ինչպես կատարյալի ցոյական *(պըժանէցէ՛ք, փըռնէցէ՛ք)*, այնպես էլ ներկայի բայահիմքերին *(պըժանէ՛ք, փըռնէ՛ք, խըմէ՛ք)*:

Ժխտական խոնարհման կառուցվածքը տարածքային տարբերակներում բնորոշվում է մասնիկավորումով. որպես ժխտական մասնիկներ, ինչպես

նշվել է, գործառում են *չ-ն, ոչ-ը* և *մի-ն*: Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերը հատկանշվում են ինչպես վերլուծական (դերբայակազմ ձևեր), այնպես էլ համադրական կազմություններով: Դրանց կառուցվածքային առանձնահատկությունը նկատի ունենալով՝ ժխտական կազմությունները քննել ենք՝ սահմանազատելով բարբառային երկու տարածք:

Առաջին տարածքը ընդգրկում են բարբառային այն միավորները, որոնց ժխտական կազմությունները վերլուծական տիպի են: Դրանք կազմվում են դերբայներով կամ դիմավոր բայով: Ըստ այս հատկանիշի՝ առանձնացնում ենք դերբայակազմ *(չեմ ուզում, սիրըմ չէմ, չէմ (չէյ) խօսէլի, չէմ (չէյի) ՛ըրէ)* և մասնիկակազմ *(գիրէցի վօչ, մի՛ մընա)* տիպեր և տարածքներ: Արգելական հրամայականի կազմություններում հոգնակի թվի քերականական կարգը դրսևորվում է *մի* ժխտական մասնիկի *(գընա՛լ մէք, գըրի՛լ մէք)* կամ դիմավոր բայաձևի հոգնակիությամբ *(մ՛էրթաք, մի՛ խաղացէø)*: Երկրորդ տարածքում գործածվում են ժխտականի համադրական կազմությունները *(չըլըսեմ)*:

Եղանականիշ մասնիկ ունեցող ժամանակաձևերի ժամանակային իմաստը դրսևորվում է *պիտիլ* բայի, *կու, հա, կա, պիտի* եղանականիշ մասնիկների կամ նրանց փոփոխակների և դիմավոր բայաձևերի զուգորդությամբ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ եղանականիշ մասնիկ ունեցող ժամանակաձևերի ժխտական կազմությունները քննել ենք՝ դրանք սահմանազատելով ըստ եղանականիշ մասնիկների:

*Կու, կա, հա* եղանականիշ մասնիկներով կազմվող ժամանակաձևերի (սահմանական ներկա և անցյալ անկատար, սահմանական, ենթադրական ապառնի և անցյալի ապառնի) իմաստները արևմտյան խմբակցության բարբառների գերակշիռ մասում արտահայտության պլանում տարբերակված չեն, այդ պատճառով էլ ներկայացնում ենք միասին: Հիշյալ ժամանակաձևերի ժխտական խոնարհման ձևերը կազմվում են բայի դիմավոր ձևերի և *չ* ժխտական մասնիկի կամ օժանդակ բայի ժխտական ձևերի զուգորդությամբ, ինչպես նաև անորոշ դերբայի (կամ նրա փոփոխակների) և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ: Նկատի ունենալով դրանց կառուցվածքային առանձնահատկությունները՝ սահմանազատում ենք բարբառային 3 տարածք:

Առաջին տարածքի բարբառային միավորները *չ* ժխտական մասնիկը հավելում են դիմավոր բայաձևերին *(չըբէրէմ «չեմ բերում և չեմ բերի», չըխըմէյ «չէի խմում և չէի խըմի»)* կամ եղանականիշ մասնիկին *(չըգօ սիրիմ)*: Այս հանգամանքը հնարավորություն է ընձեռում առանձնացնելու երկու ենթատարածք:

Բարբառային երկրորդ տարածքում ժխտական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի իմաստները արտահայտվում են դիմավոր բայի և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրմամբ: Այս տարածքում առանձնացրել ենք երեք ենթատարածք: Առաջին ենթատարածքում (Քեսաբի բարբառ) վերոնշյալ ժամանակաձևերի ժխտական բայաձևերը կազմվում են դիմավոր բայի և օժանդակ բայի եզակի 3-րդ դեմքի զուգորդությամբ *(չի սիրիմ «չեմ սիրում, չեմ սիրի»)*: Երկրորդ ենթատարածքում օժանդակ բայի և դիմավոր բայի հարադրությամբ կազմությունները հակադրվում են նախորդին օժանդակ բայի խոնարհված ձևերի առկայությամբ *(չիմ (չէնք) քըրիմ «չեմ գրում, չէի գրում, չեմ գրի, չէի գրի»,*

*չիս (չիր) քըրի(ս), չի (չէր) քըրի)*: Երրորդ ենթատարածքում (Քաբուսիեի խոսվածք) ձևային տարբերությամբ են հատկանշվում եզակի և հոգնակի թվերի ժխտական կազմությունները. եզակի թվի բոլոր դեմքերում օժանդակ բայը խոնարհվում է *(չըմ սուրվէյր «չեմ սովորում, չեմ սովորի», չըս սուրվէյր, չը սուրվէյր)*, իսկ հոգնակի թվի բոլոր ձևերում մնում է անփոփոխ *(չըր սուրվէյք «չենք սովորում, չենք սովորի», չըր սուրվաք, չըր սուրվէյն)*:

Երրորդ տարածքում սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի ժխտական ժամանակաձևերը կազմվում են անորոշ դերբայի կամ նրա հնչյունափոխված տարբերակների և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ: Բարբառային նյութի քննության ընթացքում առանձնացրել ենք այդ կազմության տարածքային տարբերակներում գործառող մի քանի կառուցատիպեր՝ *օժանդակ բայի ժխտական ձև և անորոշ դերբայ (չիմ (չէյը) կըրիլ «չեմ (չէի) գրում, չեմ (չէի) գրի»), օժանդակ բայի ժխտական ձև և անորոշ դերբայի ր վերջնահնչյունով փոփոխակ (չիմ (չէի) խըմէր «չեմ (չէի) խմում, չեմ (չէի) խմի»), օժանդակ բայի ժխտական ձև և անորոշ (ժխտական) դերբայ՝ լ կամ ր ծայնորդների անկմամբ (չըմ (չը) տըփը «չեմ (չէի) ծեծում, չեմ (չէի) ծեծի»*: Վերոնշյալ կազմություններով պայմանավորված՝ սահմանազատել ենք ենթատարածքներ:

Նկատելի է, որ արևմտյան խմբակցության բարբառների մեծ մասում սահմանական ներկայի և ենթադրական ապառնիի, անցյալ անկատարի և ենթադրական անցյալի ապառնիի ժխտական (նաև հաստատական) ձևերը նույնն են, սակայն արևմտյան խմբակցության բարբառների մի մասում և արևելյան խմբակցության բարբառներում վերոհիշյալ ժամանակաձևերը ձևային տարբերությամբ են հատկանշվում: Նկատի ունենալով վերոնշյալը՝ առանձնացրել ենք բարբառային տարածքները: Դրանցից մեկում ենթադրական եղանակի ապառնիի և անցյալի ապառնիի ժխտական ժամանակաձևերը, ի տարբերություն սահմանականի *(չիմ (չէյի) աղամ (աղայի) ա «չեմ (չէի) աղում»)*, կազմվում են ժխտական դերբայի և օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ *(չիմ (չէյի) աղար «չեմ (չէի) աղա»)*: Կեսարիայի բարբառում դրանց միջև եղած հակադրությունը դրսևորվում է նաև օժանդակ բայի ժխտական ձևերով *(չիքամ գիրէմ «չեմ գրում», չիքար գիրէրի «չէի գրում», չէմ գիրէմ «չեմ գրի», չէր գիրէրի «չէի գրի»)*:

Վերոնշյալը պայմանավորված է հիշյալ ժամանակաձևերի դրական խոնարհմամբ, որի դեպքում, ինչպես նշվել է, սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի կազմությունները հատկանշվում են ձևային տարբերությամբ՝ *խաղամ ա «խաղում եմ»-գը խաղամ «կխաղամ»*: Այս երևույթը բնորոշ է բարբառային այն միավորներին, որոնցում շարունակական ներկայի և անցյալ անկատարի ժամանականիշ մասնիկները պատմական զարգացման ընթացքում դարձել են ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստակիրներ:

Բարբառային երկրորդ տարածքում ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը դերբայակազմ են, իսկ ենթադրական ապառնիինը և անցյալինը՝ մասնիկակազմ, որի հետևանքով դրանց ժխտական կազմու-թյուններին հատուկ է ձևային տարբերակվածությունը: Ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի ժխտական խոնարհման ձևերը կազմվում են ժխտական

*(ասի չիմ (լ°լ) «չեմ (չէի) ասի»),* իսկ ներկայինը և անցյալ անկատարինը՝ անկատար և համակատար դերբայներով *(ասըմ չիմ (լ°լ) «չեմ (չէի) ասում»)*:

Երրորդ տարածքում սահմանական ներկայի և անցյալ անկատարի, ենթադրական ապառնիի ու անցյալի ապառնիի ինչպես դրական, այնպես էլ ժխտական ձևերը դերբայակազմ են. սահմանական եղանակի ժամանակաձևերը կազմվում են անկատար և համակատար *(մընալիս չիմ)*, իսկ ենթադրականինը՝ անորոշ *(մընօլ չիմ)* դերբայներով:

*Պիտիլ* բայով և *պիտի* եղանականիշ մասնիկով կազմված ժամանակաձևերի ժխտական կազմությունները բաղադրվում են *չ* և *ոչ* ժխտական մասնիկներով: Դրանք հարադրվում են բայաձևերին *(տըչըտըփիմ «պիտի չծեծեմ»)*, եղանականիշ մասնիկին *(չիբդէ կըրէմ)* կամ ունեն անկախ գործածություն *(մ°տ°մ ´´իրիմ ունչ «չպիտի գրեմ»)*: Ըստ այդ հատկանիշի՝ սահմանազատել ենք բարբառային 3 տարածք:

«Բարբառների եղանակաժամանակային կաղապարների կառուցվածքային նկարագրություն» ենթագլխում նկարագրվում են եղանակաժամանակային կազմությունների կառուցվածքային կաղապարները: Բարբառների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ հայերենի տարածքային տարբերակներում առկա են եղանակաժամանակային ձևերի կառուցատիպերի տարբեր կաղապարներ: Ժամանակակից հայերենի բայական կազմությունների կաղապարում կատարվել է Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի և Լ. Խաչատրյանի կողմից[15]: Հայերենի տարածքային տարբերակներում գործառող ժամանակաձևերը կաղապարային կառույցներով ներկայացվում են առաջին անգամ, որի համար ընտրել ենք հետևյալ սկզբունքը: Նախ՝ դրանք դասակարգել ենք՝ առանձնացնելով դրական և ժխտական խոնարհման հարացույցներում գործածվող ձևերը, այնուհետև, այդ ժամանակաձևերի կառուցվածքային հատկանիշը նկատի ունենալով, վերլուծական և համադրական կազմությունները կամ տիպերը: Բացի այդ, կաղապարների բաղադրիչները ներկայացվել են հայերեն տառերով, որոնք տվյալ եզրույթի սկզբնահնչյուններն են կամ հնչյունակապակցությունները: Կաղապարները կազմել ենք՝ հիմք ընդունելով հետևյալ նշանակումները՝ Հ-մաքուր հիմք, Հա- ձևավոր հիմք, Լ-լծորդ ձայնավոր, ԴԹ-լծորդներին հաջորդող դիմաթվային ցուցիչ, Ե-եղանականիշ մասնիկ, Ժ-ժամանականիշ մասնիկ, Ն-նախահավելված, Դ-դերբայ (ԱԴ-անորոշ դերբայ, ԱՆԴ-անկատար դերբայ, ԱՊԴ-ապառնի դերբայ, ՎԴ- վաղակատար դերբայ, ՀԴ-հարակատար դերբայ, ԵՆԴ -ենթակայական դերբայ, ԺԴ-ժխտական դերբայ), Օ -օժանդակ բայ, ԵԲ-եղանականիշ բայ (պիտէմ և այլն), ԺՄ- ժխտական մասնիկ (չ, ոչ, մի, մէք):

Բարբառների եղանակաժամանակային համակարգերում դրական խոնարհման համադրական կազմությունները գործառում են կաղապարային 8

---

[15] Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, Լ. Խաչատրյան, Բառակազմական և ձևաբանական կաղապարները ժամանակակից հայերենում, Երևան, 2011:

կառույցներով՝ միանդամ, երկանդամ և եռանդամ: Միանդամ կաղապարները երկուսն են (Հ, Հա), որոնք կազմված են մաքուր կամ ձևավոր հիմքից: Երկանդամ 3 կաղապար է առկա (Ն+Հ, Հ+ԴԹ, Հա+ԴԹ): Դրանք ձևավորվել են մաքուր կամ ձևավոր հիմքերի և դիմաթվային ցուցիչների, ինչպես նաև նախահավելվածի և հիմքի զուգորդումներից: Եռանդամ կաղապարները 3-ն են (Հ+Լ+ԴԹ, Հա+Լ+ԴԹ  Ե+Հա+ԴԹ): Դրանցում առկա են մաքուր կամ ձևավոր հիմք-լծորդ ձայնավոր-դիմաթվային ցուցիչ և եղանականիշ մասնիկ-ձևավոր հիմք-դիմաթվային ցուցիչ զուգորդելիությունները:

Համադրական կազմությամբ կաղապարները, ըստ նախամասնիկների ՝ և վերջամասնիկների զուգորդելիության, կազմում են 2 խումբ ՝ նախամասնիկավոր և նախամասնիկազուրկ: Նախամասնիկազուրկ խմբի ՝ համար առանձնացվում է ևս 2 ենթախումբ ՝ í »ñç³ Ù³ ë վերջամասնիկազուրկ: Վերջամասնիկավոր ենթախմբում զետեղվում են երկանդամ կաղապարներից երկուսը (Հ+ԴԹ, Հա+ԴԹ) և եռանդամ կաղապարները: Վերջամասնիկազուրկ խմբում միանդամ կաղապարներն են և երկանդամ կաղապարներից մեկը (Ն+Հ): Եռանդամ կաղապարներից միայն մեկն է (Ե+Հա+ԴԹ) ընդգրկվում նախամասնիկավոր խմբում:

Վերլուծական ժամանակաձևերի կաղապարները 22-ն են: Դրանց կառուցատիպերը ձևավորվում են դերբայով կամ դիմավոր բայով: Դերբայով բաղադրված կազմությունները երկբաղադրիչ և եռաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կաղապարները նույնատիպ են. փոխվում է կաղապարի միայն առաջին բաղադրիչը, այսինքն՝ դերբայի անվանումը (ԱԴ Օ, ԱՆԴ Օ, ՎԴ Օ, ՀԴ Օ, ԱՊԴ Օ, ԵՆԴ Օ): Միայն մեկ կաղապարի դեպքում (ԱԴ ԵԲ) վերջնաբաղադրիչը եղանականիշ բայ է: Կաղապարների եռաբաղադրիչ լինելը պայմանավորված է անցյալ ժամանակի իմաստ արտահայտող բառ-մասնիկի առկայությամբ (ԱԴ Օ Ժ, ԱՆԴ Օ Ժ, ՎԴ Օ Ժ, ՀԴ Օ Ժ, ԱՊԴ Օ Ժ), որից հետևում է, որ եռաբաղադրիչ կաղապարներ հնարավոր են միայն անցյալ ժամանակաձևերի դեպքում:

Դիմավոր բայով բաղադրված կազմությունները նույնպես երկբաղադրիչ և եռաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կառուցատիպերը 8-ն են: Դրանցից 3-ը (Հ+ԴԹ Ժ, Հ+Լ+ԴԹ  Ժ, Հ+Լ+ԴԹ Ե) սկսվում են բայահիմքով, մյուսները՝ եղանականիշ (Ե+Հա Օ, Ե Հ+Լ+ԴԹ, Ե Հա+-Լ+ԴԹ, Ե Ե+Հ+Լ+ԴԹ) և ժամանականիշ (Ժ  Հա+Լ+ԴԹ) մասնիկներով: Եռաբաղադրիչ կաղապարային կառույցները 2-ն են (Ե Հ+Լ+ԴԹ Ժ, Ե Հ+ԴԹ  Ժ): Դրանք սկսվում են եղանականիշ մասնիկով և ավարտվում ժամանականիշ մասնիկով:

Ժխտական խոնարհման համադրական կազմության քառանդամ կաղապարները 2-ն են: Սկզբնաբաղադրիչը ժխտական մասնիկն է, իսկ վերջնաբաղադրիչը՝ դիմաթվային ցուցիչը:

Ժխտական խոնարհման վերլուծական կազմությունները 35 կաղապա-րային կառույցներով են ներկայացվում: Դերբայներով բաղադրված վերլուծական կազմությունները երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կառուցատիպերը (ԱԴ ԺՄ, ՀԴ ԺՄ+Օ, ԱԴ ԺՄ+Օ, ԺԴ ԺՄ+Օ, ԱՊԴ ԺՄ+Օ, ԱՆԴ ԺՄ+Օ ԺՄ+Օ ՎԴ , ԺՄ+Օ ԱՊԴ, ԺՄ+Օ ԱՆԴ, ԺՄ+Օ ԺԴ, ԺՄ+Օ ԱԴ) կազմված են դերբայից և ժխտական օժանդակ բայից, *մի, մէք, ոչ* ժխտական, *պիտի* եղանականիշ մասնիկներից և դիմավոր բայաձևից: Եռաբաղադրիչ կառուցատիպերի (ԺՄ+Օ ԱՊԴ Ժ, ԺՄ+Օ ԱՆԿԴ Ժ, ԺՄ+Օ ԱԴ Ժ,

ԺՄ+Օ ՎԴ Ժ, ԺԴ ԺՄ+Օ Ժ, ԺԴ Ժ ԺՄ+Օ, ՅԴ ԺՄ+Օ Ժ, ԱՊԴ ԺՄ+Օ Ժ, ԱՆԴ ԺՄ+Օ Ժ, ԱԴ ԺՄ+Օ Ժ) դեպքում դերբային, ժխտական մասնիկին բաղադրվում է անցյալի ժամանակաիմաստ արտահայտող մասնիկը: Միայն մեկ կառույցի եռաբաղադրիչ լինելը պայմանավորված է օժանդակ բայի կրկնությամբ (ԺՄ+Օ ՎԴ Օ): Քառաբաղադրիչ կառուցատիպը (ԺԴ ԺՄ Օ Ժ) կազմված է ժխտական դերբայից, ժխտական մասնիկից, օժանդակ բայից և ժամանականիշ մասնիկից:

Դիմավոր բայով բաղադրված վերլուծական կազմությունները երկբաղադրիչ, եռաբաղադրիչ և քառաբաղադրիչ են: Երկբաղադրիչ կառուցատիպերը 8-ն են: Դրանցից 6-ի (ԺՄ Յ+Լ+ԴԹ, ԺՄ Յ+ԴԹ, ԺՄ Յա+ԴԹ, ԺՄ+Օ Յ+Լ+ԴԹ, ԺՄ+Ե Յ+Լ+ԴԹ, ԺՄ+Ե ԺՄ+Յա+Լ+ԴԹ) սկզբնաբաղադրիչը ժխտական մասնիկն է, որին հաջորդում են դիմավոր բայաձևը, օժանդակ բայը կամ եղանականիշ մասնիկը: 2-ի (Ե ԺՄ+Յ+Լ+ԴԹ, Ե ԺՄ+Յա+Լ+ԴԹ) սկզբնաբաղադրիչը եղանականիշ մասնիկն է, որը նախորդում է ժխտական մասնիկին: Եռաբաղադրիչ մեկ կառուցատիպ է առկա (Ե Յ+Լ+ԴԹ ԺՄ): Այն սկսվում է եղանականիշ մասնիկով և ավարտվում ժխտական մասնիկով: 2 քառաբաղադրիչ կառուցատիպերն էլ (Ե Օ Յ+Լ+ԴԹ ԺՄ, Ե Յ+Լ+ԴԹ ԺՄ Ժ) սկսվում են եղանականիշ մասնիկով, միայն թե դրանցից մեկն ավարտվում է ժխտական, մյուսը՝ ժամանականիշ մասնիկով:

Վերոբերյալից հետևում է, որ դրական խոնարհման վերլուծական կազմությամբ ժամանակաձևերը քանակով գերազանցում են համադրական կազմություն ունեցողներին (առկա է 22/8 հարաբերակցությունը): Ժխտական խոնարհման դեպքում նույնպես վերլուծական կազմությամբ ժամանակաձևերը գերակշիռ մասն են կազմում (այս դեպքում գործում է 35/2 հարաբերակցությունը): Ինչպես դրական, այնպես էլ ժխտական խոնարհման դեպքում վերլուծական կառույցների կաղապարները ավելի բազմազան են և տարատեսակ:

«Տեղաշարժեր բարբառների եղանակաժամանակային համակարգերում» ենթագլխում ներկայացվում են հայերենի տարածքային տարբերակներում ժամանակի ընթացքում առաջացած տեղաշարժերը:

Բարբառների եղանակաժամանակային համակարգերում, ներլեզվական ու արտալեզվական գործոններով պայմանավորված, կատարվել են տեղաշարժեր: Բարբառային մի խմբում տեղաշարժեր են տեղի ունեցել եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկներով կազմություններում: Այսպես՝ Ա. Ղարիբյանը *կոր (գօր)* մասնիկի գործածություն է արձանագրում Օրդուի խոսվածքում, սակայն, ըստ ՀԲԱ-ի ծրագրով հավաքված նյութերի, Համշենի Օրդուի խոսվածքում գործառում է *ունի//գունի* մասնիկը: Նմանատիպ երևույթ է առկա նաև Շապին Գարահիսարի բարբառում: Ա. Ղարիբյանը նշում է *դէ* մասնիկի գործածություն, բայց ինչպես Հ. Խաչատրյանի՝ Շապին Գարահիսարին նվիրված ուսումնասիրությունում, այնպես էլ ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Շապին-Գարահիսարի բարբառը» աշխատանքում (տե՛ս ՀԲԱՆ, Շապին-Գարահիսար, 3) այն արձանագրված չէ: Այստեղ շարունակական ներկայի և անցյալ անկատարի հարացույցներում, ինչպես նշվել է, *դար* ժամանականիշն է գործառում *(կը բաքնէմ դար)*: Հավանաբար այս բարբառում ժամանակի ընթացքում *դէ* եղանականիշը փոխարինվել է *դար* մասնիկով:

Պոլսի միջբարբառի Տրապիզոնի խոսվածքում, Սիվրիհիսարի միջբարբառում, ըստ Հ. Աճառյանի, շարունակական ներկայի և անցյալ անկատարի

հարացույցներում գործածվում է *էր* մասնիկը: Այն ունի հետադաս գործածություն՝ *սիրիմ էր, սիրիս էր, սիրէ էր, սիրինք էր, սիրիք էր, սիրին էր*: Ա. Ղարիբյանը *էր* մասնիկի գործածություն արձանագրում է միայն Տրապիզոնի բարբառում: ՀԲԱ-ի ծրագրով լրացված Տրապիզոնի խոսվածքում շարունակական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևեր չեն նշվում: Այստեղ ներկայի ու անցյալ անկատարի իմաստների արտահայտման ձևաբանական միակ միջոցը *գու* մասնիկով և ըղձական եղանակի բայաձևերով զուգորդությունն է *(կըրիմ գու «գրում եմ», կըրիս գու, կըր° գու…)*:

Վերոնշյալից ենթադրվում է, որ այս տարածքում շարունակական ժամանակների իմաստակիր *էր* ժամանականիշը դուրս է ընկել, և որպես ներկայի և անցյալ անկատարի իմաստների միակ արտահայտիչ՝ գործածվել են *գու* եղանականիշ մասնիկով բաղադրված կազմությունները:

*Հայկակ* մասնիկը, ըստ Հ. Աճառյանի, շարունակական ժամանակների իմաստներ է արտահայտում Ադափազարում: Սակայն ՀԲԱ-ի ծրագրով լրացված Ադափազարի խոսվածքում *հայկակ* ձևը արձանագրված չէ: Դրա փոխարեն այստեղ նշված է *հայ* եղանականիշ մասնիկը *(գառթամ հայ, գառթաս հայ, գառթա…)*: Հավանաբար կատարվել է հնչյունական փոփոխություն. *հայկակ* ժամանականիշի վերջնավանկի անկմամբ առաջացել է *հայ* ձևը:

Մալաթիայի բարբառում տեղի է ունեցել *ա* մասնիկի իմաստագործառական փոփոխություն: Այս բարբառում շարունակական ներկայի և անցյալ անկատարի *ա* եղանականիշ մասնիկով կազմվող ժամանակաձևեր են նշվում Ա. Ղարիբյանի և Հ. Աճառյանի կողմից: Հարցի վերաբերյալ այլ տեսակետ ունի Թ. Դանիելյանը: Նա, ուսումնասիրելով Մալաթիայի բարբառը, արձանագրում է, որ բարբառախոս մալաթիացիները չեն տարբերակում ընդհանրական ներկան և շարունակականը: Իրոք, ներկայումս Մալաթիայի բարբառում բայի դիմավոր ձևերի և *ա* մասնիկի հարադրությամբ կազմվում են ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը *(մընամ ա, մընաս ա, մընա յա…)* , որոնք, ծագմամբ շարունակական լինելով, այժմ իբրև այդպիսին չեն գիտակցվում:

Հաջորդ տարածքում՝ Մարաշ-Զեյթունի, Կեսարիայի և Բեյլանի բարբառներում, ինչպես նշվել է, գործառում են *կա* մասնիկը և նրա փոփոխակները՝ *գա գաբրիմ, գա գաբրիս, գա գաբրէ, գա գաբրինք, գա գաբրէք, գա գաբրին* (ՀԲԱՆ, Բեյլան, 459): Կիլիկիայի բարբառախմբի Մարաշ-Զեյթունի բարբառում գործածվում է *կա* մասնիկի *գօ* փոփոխակը՝ *գօ գայթօմ, գօ խուսիր*: Ըստ Հ. Աճառյանի՝ Կիլիկիայում *գօ* եղանականիշ մասնիկի հարադրմամբ կազմվում են ինչպես շարունակականի, այնպես էլ ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը, և դրանց միջև տարբերությունը առկա է միայն ձայնավորրասկիզբ բայերի դեպքում: Սակայն բարբառային նորագույն փաստերը այլ բան են արձանագրում: Այսպես, ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Զեյթունի բարբառը» և «Մարաշի բարբառը» աշխատանքներում շարունակական ժամանակաձևեր նշված չեն, իսկ *գօ* եղանականիշ մասնիկը գործածվում է ընդհանրական ներկա *(գօ մընօմ «մնում եմ»)* և անցյալ անկատար *(գօ մընայի «մնում էի»)* ժամանակաձևերի կազմություններում (ՀԲԱՆ, Մարաշ, 337): Լեռնային Կիլիկիայի Ֆուռնոս (Ուլնիա) գյուղաքաղաքի խոսվածքում *գօ*-ն շարունականի մասնիկն է *(գօ գուդիմ)*, իսկ

ընդհանրականինը (նաև ապառնիինը)՝ *գը*-ն կամ *գու*-ն է *(գըկըրիմ)* (ՀԲԱՆ, Զեյթուն, Ֆուռնոս Ուլնիա, 295):

Վերոնշյալից երևում է, որ բարբառային հիշյալ տարածքում *գօ* եղանականիշ մասնիկը գործածվում է իր նախնական իմաստով, որից կարելի է ենթադրել, որ Կիլիկիայի միջբարբառախմբում ներկայումս ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ արտահայտող *գօ* նախամասնիկը ծագմամբ շարունակական է: Սա կարելի է հիմնավորել նաև այն փաստարկով, որ այդ միջբարբառախմբում ենթադրական ապառնիի *(կու կըյիմ)* և անցյալի ապառնիի կազմությունները տարբեր են սահմանական ներկա *(գօ կըյիմ)* և անցյալ անկատար ժամանակաձևերից:

Կեսարիայի և Բեյլանի բարբառներում ևս ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, ներկայի և անցյալ անկատարի իմաստներն արտահայտող կառուցվածքային կաղապարները ձևային արտահայտությամբ տարբերակված են. ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի իմաստներն արտահայտվում են *կա (գա՝ գա կըրիմ «կգրեմ»)*, ենթադրական ապառնիինը և անցյալինը՝ *գը* եղանականիշ մասնիկներով *(գը կըրիմ «կգրեմ», գը կըրի դի «կգրեի»)*: Վերոնշյալից հետևում է, որ Կեսարիայի և Մարաշ-Զեյթունի բարբառներում, ինչպես Արաբկիրում և Մալաթիայում, կատարվել է նույն տեղաշարժը:

*Կա* նախամասնիկը, ինչպես նշվել է, Սվեդիայի բարբառում գործածվում է *գու* տարբերակային ձևով *(գու կըրիմ «գրում եմ»)*: Հ. Աճառյանի և Տ. Անդրեասյանի կողմից հիշյալ բարբառում ներկայի և անցյալ անկատարի իմաստակիր է նշվում *գը* տարբերակը *(գը խուսէմ «խոսում եմ», գը խուսար «խոսում էր»)*: *Գու* եղանականիշ մասնիկով կազմությունները, ըստ Հ. Աճառյանի, շարունակական ժամանակների իմաստ են արտահայտում, իսկ Գ. Հանանյանի կարծիքով՝ ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի: Ինչպես երևում է, այստեղ էլ բարբառային հին և նոր տվյալների միջև տարբերություն է առկա. մոտ 4 տասնամյակ տևողությամբ ժամանակահատվածում հավանաբար վերոնշյալ կառույցների բովանդակության պլանում կատարվել է տեղաշարժ:

Համշենի բարբառի խոսվածքներում ապառնի ժամանակաձևերի կառուցվածքային կաղապարների գործառության տեղաշարժ է նկատվում: Այսպես, Չիբլուխուի խոսվածքում ենթակայական դերբայով և օժանդակ բայով կառույցը բազմիմաստ է. դրսևորում է սահմանական և ենթադրական ապառնիների իմաստներ *(ասօղ ըմ (էյի) «ասելու եմ, էի, կասեմ, կասեի»)*: Օրդուի խոսվածքում հիշյալ կազմությունները գործածվում են սահմանական և հարկադրական ապառնիների իմաստների դրսևորման համար. հարկադրականի հարացույցում *-օղ* վերջամասնիկն ունեցող դերբայով կազմություններին զուգահեռ *(փօրօղ ըմ)* կիրառվում են նաև *պիտի* եղանականիշ մասնիկով *(նըստիմ ինի, նըստիս բիդի, նըստի բիդի …)* բաղադրությունները (ՀԲԱՆ,Համշեն, Օրդու, 94): Համշենի Սամսոն գավառում ապառնիի վերոբերյալ ձևերը գործառական հստակ տարբերակվածություն ունեն: *-Օղ* վերջամասնիկն ունեցող դերբայով և օժանդակ բայով հարադրությունները սահմանական ապառնիի հարացույցում են *(ուդօղ իմ «ուտելու եմ»)* գործառում, իսկ *պիտի* նախամասնիկով և դիմավոր բայով զուգորդությունները՝ հարկադրական *(կըրիմ իդի «պիտի գրեմ»)* (ՀԲԱՆ,

Համշեն, Սամսոն, 187): Ի հակադրություն վերոնշյալի՝ Համշենի բարբառի Ծինգիր և Միմեր խոսվածքներում ենթակայական դերբայով հարադրությունները *(կըրօղ չիմ)* գործածվում են միայն հարկադրական եղանակի ժխտական խոնարհման կազմություններում:

Այս փաստերը հիմք են տալիս ենթադրելու, որ նշված վայրերում տեղաշարժ է կատարվել սահմանական և հարկադրական եղանակների ապառնիների կառուցվածքային կաղապարներում: Թերևս նախապես կիրառվել է *պիտի* եղանականիշ մասնիկով կազմությունը, որոնց զուգահեռ հետագայում գործածվել է ենթակայական դերբայով և օժանդակ բայով հարադրությունը՝ հավանաբար որպես սահմանական և հարկադրական ապառնիների տարբերակման ձևաբանական միջոց: Այն, նախապես կիրառվելով մասնիկավոր կազմություններին զուգահեռ, հետագայում ձեռք է բերել սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի իմաստներ, իսկ որոշ վայրերում պահպանվել է միայն ժխտական խոնարհման հարացույցում:

Այսպիսով, բարբառներում առկա տեղաշարժերը պայմանավորված են բարբառային ազդեցություններով և ներթափանցումներով, եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկների հնչյունական և իմաստային անցումներով, դրանց անկմամբ կամ մեկ ուրիշով փոխարինմամբ, ինչպես նաև կաղապարային կառույցների գործառական սահմանափակմամբ:

Չորրորդ գլխում («Արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության դրսևորումները բարբառների եղանակաժամանակային համակարգերում») քննվում են եղանակաժամանակային կազմությունների արտահայտության և բովանդակության պլանների փոխհարաբերության դրսևորումները՝ քերականական համանունություն, համանիշություն և բազմիմաստություն, ինչպես նաև լրացական բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևերը:

Տարածքային տարբերակների զուգադրական քննությունից պարզվում է, որ եղանակաժամանակային համակարգերում առկա են քերականական համանունության միջհարացուցային և ներհարացուցային տիպերը՝ իրենց տարաբնույթ դրսևորումներով: Միջհարացուցային համանունությունը արտահայտվում է դիմավոր բայաձևերի, դերբայի և դիմավոր բայաձևի, դերբայական ձևերի միջև՝ դիմաքվանիշների, դիմաքվանիշների և վերջամասնիկների, վերջամասնիկների համանունությամբ պայմանավորված: Դիմավոր բայաձևերի միջև առկա համանունությունը դրսևորվում է ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի, ըղձական ապառնիի և հրամայական եղանակի բայաձևերի միջև[16]: Ըղձական ապառնիի և

[16] Ըղձական ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերի միջև առկա համանունությունը դրսևորվում է նաև այն բոլոր ժամանակաձևերի դեպքում, որոնք կազմվում են ըղձականից (սահմանական ներկա և անցյալ անկատար (արևմտյան խմբակցության բարբառներ), ենթադրական, հարկադրական ապառնի և անցյալի ապառնի), սակայն աշխատանքում կրկնությունից խուսափելու համար նշվում է միայն ըղձական եղանակի ժամանակաձևերի համանունությունը:

անցյալի ապառնիի ժամանակաձևերի միջև համանունությունը առկա է ըղձական ապառնիի եզակի 3-րդ (*կըրէմ, կըրէս, կըրի)* և ըղձական անցյալի եզակի 1-ին դեմքերի միջև *(կըրի, կըրիր, կըրէր)*, *ի* լծորդության բայերի ըղձական ապառնիի եզակի 3-րդ *(հավնիմ, հավնիս, հավնի)* և անցյալի եզակի 1-ին *(հավնի, հավնիր, հավնէր*), ինչպես նաև ապառնի *(հավնինք, հավնէք, հավնին)* և անցյալ *(հավնինք, հավնիք, հավնին)* ժամանակաձևերի հոգնակի 1-ին և 3-րդ, ըղձական ապառնիի *(գըրիմ, գըրիս, գըրա, գըրինք, գըրիք, գըրին)* և անցյալի *(գըրի, գըրիր, գըրէր, գըրինք, գըրիք, գըրին)* հոգնակի թվի բոլոր դեմքերի միջև:

Ըղձական և հրամայական եղանակների ժամանակաձևերի միջև դրսևորվող համանունությունը բնորոշ է ըղձական ապառնիի եզակի 3-րդ դեմքի *(ըսիմ, ըսիս,* ***ըսէ****)* և հրամայական եղանակի եզակի թվի բայաձևերին *(ըսէ՛, գաբէ՛)*, ըղձական ապառնիի եզակի 3-րդ դեմքի *(ուդիմ, ուդիս,* ***ուդէ****...)* և *ե* խոնարհման պարզ բայերի հրամայականի ձևերին *(աբրէ՛, խուսէ՛, ուդէ՛)*, ինչպես նաև ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքի *(խուսի, խուսիյ, խուսէյ)* ևածանցավոր բայերի եզակի հրամայականի կազմություններին *(հաքէ՛յ, անցէ՛յ, կըդէ՛յ, տիմացէ՛յ)*, ըղձական ապառնիի հոգնակի 2-րդ դեմքի ժամանակաձևերին *(խըմէմ, խըմէս, խըմէ, խըմինք, խըմէք, խըմին)* և հոգնակի հրամայականի *(խըմէ՛ք)* բայաձևերին:

Դիմավոր բայաձևերի և դերբայների միջև առկա համանունությունը դրսևորվում է ըղձական ապառնիի և անցյալի ապառնիի եզակի 3-րդ դեմքի ժամանակաձևերի և ժխտական, վաղակատար դերբայների միջև: Ժխտական դերբայի և ըղձական եղանակի ժամանակաձևերի համանունությունը արտահայտվում է ժխտական դերբայի *(չիմ) խուսի)* և ըղձական անցյալի ապառնիի 1-ին դեմքի բայաձևերի *(խուսի «խոսեի», խուսիյ, խուսէյ)*, ըղձական անցյալի ապառնիի եզակի 3-րդ դեմքի բայաձևերի *(պանէր էմ «գործեի», պանէր ես, պանէր)* և ժխտական դերբայի միջև *(չի) պանէր էմ, (չի) պանէր էս)*:

Ըղձական եղանակի բայաձևերի և վաղակատար դերբայի համանունությունը դրսևորվում է ըղձական անցյալի ապառնիի 3-րդ դեմքի բայաձևերի *(խօսի, խօսիյ, խօսէյ)* և վաղակատար դերբայի *(խօսէյ (էմ)*, ըղձական անցյալի ապառնիի եզակի 2-րդ դեմքի բայաձևերի *(կըրիմ, կըրիր, կըրէր)* և վաղակատար դերբայի *(կըրիր (էմ)*, ըղձական անցյալի եզակի 3-րդ դեմքի *(սիրէյի, սիրէյիր, սիրէր)* և ժխտական կամ վաղակատար դերբայների *(չէմ) սիրէր, դէսէր (էմ)* միջև: Միջհարացուցային համանունություն է առկա նաև *ե* և *ի* խոնարհման բայերի անորոշ *(ասել, դընիլ)* և վաղակատար *(ասել, դընիլ)* դերբայների միջև:

Ներհարացուցային համանունությունը արտահայտվում է ըղձական անցյալի ապառնի ժամանակաձևերում՝ հինհայերենյան անցյալ անկատարի դիմաքվանիշ վերջավորությունների նույնությամբ պայմանավորված: Դրանք համանուն զույգեր են կազմում եզակի և հոգնակի թվի տարբեր դեմքերում՝ եզակի 2-րդ և 3-րդ *(մընէ, մընէր, մընէր, մընէնք, մընէք, մընէն)*, եզակի 1-ին, 2-րդ, 3-րդ *(խօսէր, խօսէր, խօսէր, խօսէնք, խօսէք, խօսէն)*,

եզակի 2-րդ, 3-րդ, ինչպես նաև եզակի և հոգնակի 1-ին *(խօսէնք, խօսէր, խօսէր, խօսէնք, խօսէք, խօսէն)*, եզակի 2-րդ, 3-րդ, հոգնակի 1-ին ու 2-րդ *(խօսէմ, խօսէր, խօսէր, խօսէկ, խօսէկ, խօսէն)*, եզակի 2-րդ, 3-րդ, ինչպես նաև եզակի 1-ին, հոգնակի 1-ին ու 2-րդ *(խօսէկ, խօսէր, խօսէր, խօսէկ, խօսէկ, խօսէն)*, հոգնակի 1-ին և 2-րդ՝ *(գինայի, գինայդ, գինար, գինայկը, գինայկը, գինայնը)*, եզակի և հոգնակի 1-ին *(մընէնք, մընիր, մընէր, մընէնք, մընիք, մընէն)*:

Ընդհանրացնելով ներհարացուցային համանունության դրսևորումները՝ կարելի է առանձնացնել երկանդամ և եռանդամ շարքեր: Երկանդամ շարք կազմող համանուն ձևերը մի դեպքում գործառում են միայն եզակի թվի հարացույցում (եզակի 2-րդ և 3-րդ դեմքերում՝ *ըսէ, ըսէր, ըսէր, ըսէնք, ըսէք, ըսէն*), մեկ այլ դեպքում՝ միայն հոգնակի թվի *(գինայի, գինայդ, գինար, գինայկը, գինայկը, գինայնը)*: Առկա են նաև ներհարացուցային համանունության երկանդամ շարքեր եզակի և հոգնակի թվերի հարացույցներում միաժամանակ՝ եզակի 2-րդ-3-րդ և եզակի ու հոգնակի 1-ին դեմքերում՝ *գըրէնք, գըրէր, գըրէր, գըրէնք, գըրէք, գըրէն*, ինչպես նաև հոգնակի 1-ին, 2-րդ և եզակի 2-րդ, 3-րդ դեմքերում՝ *խօսէմ, խօսէր, խօսէր, խօսէկ, խօսէկ, խօսէն*: Եռանդամ համանունությամբ հատկանշվում է միայն եզակի թիվը, որի բոլոր դեմքերում գործածվում է նույն բայաձևը *(կ°ըտէր, կ°ըտէր, կ°ըտէր, կ°ըտէնø, կ°ըտէø, կ°ըտէն):*

Ի մի բերելով ըղձական անցյալի ապառնիի դիմաթվանիշների նյութական արտահայտության ձևերը՝ կարելի է ենթադրել, որ նախապես տեղի է ունեցել եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի նույնացում, որոնք գրաբարում տարբերվում էին միայն *ի* հնչյունի առկայությամբ, այսպես՝ *էիր* (եզակի 2-րդ դեմք)-*էր* (եզակի 3-րդ դեմք): Հավանաբար *ի* հնչյունի անկմամբ դրանք ստացել են ձևային միևնույն արտահայտությունը, որն այնուհետև համաբանությամբ ընդգրկել է նաև 1-ին դեմքը՝ առաջացնելով եզակի թվի դիմային վերջավորությունների եռանդամ շարք: Բացի այդ, բարբառներում առկա է եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի դիմանիշների նույնություն, սակայն չի արձանագրվել եզակի 1-ին և 3-րդ դեմքերի թեքույթների համանունություն: Համանման ճանապարհով, ըստ երևույթին, սկզբնապես կատարվել է նաև հոգնակի թվի 1-ին և 2-րդ դեմքերի նույնացում, որոնց տարբերությունը գրաբարում պայմանավորված էր *ա* և *ի* հնչյուններով, այսպես՝ *աք* (հոգն. թվի 1-ին դեմք), *իք* (հոգն. թվի 2-րդ դեմք): Ձևային հիշյալ նույնությունն էլ հոգնակի 1-ին դեմքի *ն* հնչյունի հավելման պատճառ է դարձել: Նկատի ունենալով բարբառներում հոգնակի 1-ին դեմքի *եաք* դիմաթվանիշի դիմաց *եանք* ձևի առկայությունը՝ Հ. Աճառյանը առաջ է քաշում *ն* հնչյունի հավելման երկրորդ վարկածը:

Հավանաբար նշված երկու փոփոխություններն էլ կատարվել են, միայն թե բարբառային միավորների մի մասն ընթացել է հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի զարգացման առաջին, իսկ մյուսը՝ երկրորդ ճանապարհով: Նկատենք, սակայն, որ հոգնակի 1-ին և 2-րդ դեմքերի, ինչպես նաև եզակի 1-ին դեմքի համանունության բազում փաստերն առանց ռնգային *ն* հնչյունի ավելի հավանական են դարձնում առաջին վարկածը: Ենթադրելի է, որ ավելի ուշ դիմային վերջավորությունների զարգացման գործընթացը հաջորդաբար ընդգրկել է նաև եզակի և հոգնակի թվի 1-ին դեմքերը: Հա-

վանաբար հիշյալ երևույթը նախորդել է *ն* ռնգայինի հավելմանը, քանի որ մի շարք վայրերում արձանագրված է հոգնակի և եզակի թվերի 1-ին դեմքերի համանունություն առանց *ն* դիմանիշի: Նման դեպքերում նկատելի է եռանդամ համանունություն. եզակի և հոգնակի 1-ին, ինչպես նաև հոգնակի թվերի 2-րդ դեմքերում գործածվում է նույն *-էք* վերջավորությունը: Կարելի է ենթադրել, որ հիշյալ եռանդամ համանունությունն էլ *ն* ռնգայինի հավելման պատճառ է դարձել:

Հայերենի տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերի զուգադրությունը ցույց է տալիս, որ բարբառային միավորներին բնորոշ է քերականական համանիշությունը, այսինքն՝ նույն իմաստի արտահայտման համար քերականական տարբեր կառուցատիպերի կիրառումը եղանակաժամանակային համակարգերում: Դրանք եղանակաժամանակային ձևերը կազմելիս գործածում են ձևաբանական այնպիսի միջոցներ, որոնք հատկանշվում են իմաստային համարժեքությամբ և ձևային տարբերությամբ: Բարբառային նյութի դիտարկումից պարզվում է, որ հայերենի տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերում առկա համանիշության դրսևորումները զուրկ են միօրինակությունից և անհամասեռ պատկեր են ներկայացնում ոչ միայն ըստ տարածական բնութագրի, այլև բայական միևնույն հարացույցի ներսում:

Բարբառային միավորներում՝ սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերում, գործածվում են համանիշ կազմություններ՝ պայմանավորված դերբայի և նրա փոփոխակի, դերբայավոր և մասնիկավոր կազմությունների, դերբայակազմ և գրաբարատիպ ձևերի, ժխտական խոնարհման տարբեր կազմությունների կիրառությամբ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ սահմանազատել ենք բարբառային տարածքներ, որոնցում ներկայի և անցյալ անկատարի իմաստների արտահայտման համար կիրառվում են կաղապարային երկու համանիշ կառույցներ՝ բաղադրված անկատար դերբայի՝ *-ում* և *-ըմ* վերջամասնիկներն ունեցող տարբերակային ձևերով *(մըմըմ// մընում էմ)*, դերբայավոր և մասնիկավոր կազմությունների *(սիրիլ իմ// գըսիրըմ, չուզիմ//չըմ ուզի)*, գրաբարաձև. և դերբայակազմ ձևերի *(խօսըմ ի// խօսի)*, ժխտական տարբեր կազմությունների գործածությամբ *(չըքօմ սիրէ… չիմ սիրէ, չիս սիրէ, չի սիրէ)*:

Բարբառային միավորների՝ անցյալ ժամանակաձևերում առկա համանիշության դրսևորումները պայմանավորված են բայական տարբեր կազմությունների՝ համադրական և վերլուծական ձևերի *(խըմամ, խըմաս, խըմալ ա…)*, դերբայական տարարժեք ձևերի *(կըրած էմ //կըրէր էմ)*, տարբեր հիմքերով բայաձևերի *(չափիցի//չափի)*, նույն դերբայի տարբերակների *(չըմ (չի) խա՝իր//չըմ (չի) խա՝իրի)* գործածությամբ: Նկատի ունենալով վերոնշյալը՝ սահմանագծել ենք բարբառային մի շարք տարածքներ:

Տարածքային տարբերակների մի մասում հարակատար դերբայով բաղադրված կազմությունները գործառում են վաղակատար ժամանակաձևերի հարացույցներում, որի հետևանքով քերականական համանիշություն է առաջանում հարակատար և վաղակատար դերբայներով

հարադրված կառուցատիպերի միջև. հարակատար դերբայով կազմությունը առկա է շրջուն շարադասությամբ կառույցներում՝ հոգնակի 3-րդ դեմքում *(ընդոք ա գըրած)*: Ուղիղ շարադասության դեպքում գործածվում է վաղակատար դերբայի՝ *-էր* վերջամասնիկով դիրքային տարբերակը *(Ìըրիր իմ (էր)*: Բարբառային մեկ այլ տարածքում հարակատար դերբայով կազմված հարադրությունները հատուկ են ներգործական սեռի որոշ բայերի. վերջիններս գործածվում են վաղակատար դերբայով բաղադրված ժամանակաձևերի հետ միևնույն հարացույցում՝ եզակի և հոգնակի 3-րդ դեմքերում *(կըրէր էմ, կըրէր էս, կըրած ա, կըրէր էնք, կըրէր էք, կըրած էն)*: Ապառնի ժամանակաձևերում համանիշ ձևեր են առաջանում՝ պայմանավորված նույն դերբայի վերջամասնիկների, կազմությունների, եղանականիշների տարբերությամբ, նույն եղանականիշի տարբերակներով: Նկատի ունենալով վերոնշյալը՝ սահմանագծում ենք 4 տարածք, որոնցում կիրառվում են նույն դերբայի տարբեր վերջամասնիկներով *(ըիըլական ըմ (ի)//ըիըլան ըմ «ասելու եմ, էի»...)*, տարբեր եղանականիշներով *(պիտի (բ, բըդ, բըն) և կը (գ, գը)* կազմություններ *(գուդիմ «ուտելու եմ» կամ բուդիմ «ուտելու եմ»)*, դերբայակազմ և մասնիկակազմ ձևեր *(նըստիմ ինի «պիտի նստեմ» կամ փօրօղ ըմ «պիտի փորեմ», պիտի գրէմ կամ գըրիլ պըտէմ):*

Այսպիսով, բարբառների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննությունից երևում է, որ ժամանակային նույն իմաստի դեպքում ձևաբանական տարբեր միջոցների գործածությամբ բարբառների եղանակաժամանակային համակարգերում առանձնացվում են քերականական համանիշներ, որոնց առկայությունը պայմանավորված է ներկա, անցյալ և ապառնի ժամանակաձևերի կառուցատիպերով:

Հայերենի տարածքային տարբերակները հատկանշվում են քերականական բազմիմաստությամբ: Նկատելի է, որ ձևային նույնությամբ բնութագրվող եղանակաժամանակային կառուցատիպերը հաճախ իմաստային տարբեր հակադրություններ են ստեղծում: Այս հատկանիշով պայմանավորված՝ սահմանազատել ենք բարբառային երկու տարածք:

Առաջին տարածքում առանձնացնում ենք ենթատարածքներ, որոնցում մի դեպքում *պիտի* եղանականիշ մասնիկով կազմված համադրությունները արտահայտում են ինչպես սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի, այնպես էլ հարկադրական եղանակի իմաստներ *(բըր կըրիմ «գրելու եմ, պիտի գրեմ»)*, մեկ այլ դեպքում՝ սահմանական ներկայի, անցյալ անկատարի և ենթադրական ապառնիի, անցյալի ապառնիի ժամանակաձևերի իմաստներ *(կըթըռնիմ «թռչում եմ, թռչում էի և կթռչեմ, կթռչեի»)*: Հաճախ առկա են բազմիմաստության երկանդամ շարքերի զույգեր: Մի կողմից՝ սահմանական ներկայի և անցյալ անկատարի ժամանակաձևերը արտահայտում են նաև ենթադրական ապառնիի ու անցյալի ապառնիի իմաստներ *(կըխըմիմ (խմում եմ և կխմեմ), կըխըմէի «խմում էի և կխմեի»)*, մյուս կողմից՝ *պիտի* եղանականիշ մասնիկով հարադրված կազմությունները, սահմանական ապառնիից ու անցյալի ապառնիից բացի, ունեն հարկադրական ապառնիի ու անցյալի ապառնիի իմաստներ *(պի խըմիմ (խմելու եմ և պիտի խմեմ), պի խըմէի (խմելու էի և պիտի խմեի)*:

Բարբառային երկրորդ տարածքը հատկանշվում է բազմիմաստության եռանդամ շարքերով: Այստեղ ևս սահմանազատում ենք ենթատարածքներ՝ նկատի ունենալով այն, որ միևնույն կառուցատիպով մի դեպքում արտահայտվում է սահմանական ներկայի, անցյալ անկատարի, ըղձական և ենթադրական եղանակների իմաստներ *(մընամ «մնում եմ, մնամ, կմնամ»*, *մընայի «մնում էի, մնայի, կմնայի»)*, մեկ այլ դեպքում՝ սահմանական եղանակի ներկայի և անցյալ անկատարի, ապառնիի և անցյալի ապառնիի, ինչպես նաև ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի իմաստներ *(կըմընէմ «մնում եմ, մնալու եմ, կմնամ»*, անցյալ՝ *կըմընէ «մնում էի, մնալու էի, կմնայի»)*:

Քերականական բազմիմաստություն է առկա նաև հարակատար դերբայով հարադրված կազմություններում: Դրանք բնորոշվում են ոչ միայն հարակատար, այլև վաղակատար ժամանակաձևերի իմաստների արտահայտմամբ *(բիրծրիյած ըմ «բարձրացել եմ, բարձրացած եմ»)*: Վերջինս թերևս կարելի է բացատրել այն փաստով, որ հիշյալ տարածքում վաղակատար դերբայով կազմությունները իմաստային և գործառական այլ ծանրաբեռնվածությամբ են հատկանշվում՝ արտահայտելով անցյալ կատարյալ ժամանակաձևի իմաստ և կազմելով նրա հարացուցային շարքը:

Վաղակատար դերբայով ժամանակաձևերը ևս, ինչպես ասվել է, բնորոշվում են գործառական բազմարժեքությամբ: Դրանք ժամանակային երկու իմաստ են արտահայտում՝ վաղակատարի և անցյալ կատարյալի *(խըմալ ըմ «խմել եմ և խըմեցի»)*: Սակայն եթե վերը նշված բազմիմաստության բոլոր արտահայտությունները բարբառային նույն միավորի շրջանակներում են առկա, այս պարագայում այն դրսևորվում է տարածքային տարբեր միավորներում: Սա նկատի ունենալով՝ վաղակատար դերբայով արտահայտվող բազմիմաստությունը կարելի է կոչել միջբարբառային, քանի որ առկա է բարբառային տարբեր միավորներում, իսկ բազմիմաստության մյուս բոլոր արտահայտությունները անվանել ներբարբառային՝ բարբառային նույն միավորի ներսում դրսևորվելու պատճառով:

Քննել ենք նաև լրացական բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևերը: Նույն քերականական իմաստը տարբեր բայերի դեպքում կարող է արտահայտվել տարբեր ձևերով: Այդպիսի ձևերը ընդունված է համարել լրացական բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևեր: Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերում ևս գործառում են քերականական ձևեր, որոնք գտնվում են լրացական բաշխման հարաբերության մեջ: Լրացական բաշխման հարաբերության մեջ գտնվող ձևերի առկայությունը մի դեպքում պայմանավորված է բայի սկզբնահնչյունով՝ ձայնավորասկիզբ կամ բաղաձայնասկիզբ լինելով *(մընամ, կաղամ)*, լծորդությամբ *(ի, ե(է)* լծորդության բայերն ունենում են *-ում (ըմ) (ղարկըմ)*, իսկ *ա* լծորդության բայերը՝ *-լիս* վերջամասնիկներով դերբայներ *(մընալիս)*, սեռային տարբերությամբ *(սիրում ամ «սիրում եմ»*, սակայն՝ *այրման ամ «այրվում եմ»)*, *պիտի* եղանականիշ մասնիկի՝ մեկից ավելի փոփոխակների *(պ, պի, պիդ, բըդը*, *բիդ, բուդու)* գործածությամբ:

Բարբառների եղանակաժամանակային համակարգը ուսումնասիրելու նպատակով կատարվել է լեզվական նյութի համակարգչայնացում: Համակարգչայնացված նյութը և ուսումնասիրության արդյունքները արտահայտվել են համապատասխան աղյուսակների (6) և քարտեզների (26) միջոցով, որոնք տրված են ատենախոսության հավելվածում: Քարտեզները ներկայացնում են հայերենի բարբառների բայական հատկանիշները տարածական բաշխման տեսանկյունից, իսկ աղյուսակները նշում են դրանց առկայությունը կամ բացակայությունը 460 բարբառախոս վայրերում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայերենի տարածքային տարբերակներում բայի եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննությունը հնարավորություն է տալիս կատարելու մի շարք եզրահանգումներ.

1. Հայերենի բարբառներում միմյանց հակադրվում է 5 եղանակաձև՝ սահմանական, ըղձական, հարկադրական, ենթադրական և հրամայական: Արևելյան խմբակցության բարբառները հատկանշվում են այդ 5 եղանակային ձևերի արտահայտության և բովանդակության պլանների համապատասխանությամբ: Այս խմբակցությունում, ի տարբերություն արևմտյանի, ապառնիության իմաստային բոլոր դրսևորումները ունեն ձևային տարբեր արտահայտություններ, հետևաբար նաև կաղապարային առանձին կառույցներ: Արևմտյան խմբակցության բարբառներում, ի տարբերություն արևելյանի, եղանակային իմաստները արտահայտության պլանում դրսևորվում են 3 կամ 4 կառուցատիպերով, որոնց բովանդակության պլանում կարող են համապատասխանել նշված 5 եղանակների քերականական իմաստները: Դրանցում ապառնի ժամանակաձևերի իմաստագործառական հատկանիշների հստակ սահմանազատում չկա:

Արևմտյան խմբակցության մի շարք բարբառներ հատկանշվում են եղանակաձևերի 4 կառուցատիպերի գործածությամբ, սակայն եթե դրանց մի մասում պիտի եղանականիշ մասնիկով կամ պիտիլ բայով հարադրությունները են դրսևորում իմաստային տարբերակվածություն՝ արտահայտելով ինչպես սահմանական ապառնիի, այնպես էլ հարկադրական եղանակի իմաստներ, ապա մեկ այլ խմբում կու, կա եղանականիշ մասնիկներով կազմություններին է բնորոշ բազմիմաստությունը (արտահայտում են ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի, սահմանական ներկայի և անցյալ անկատարի իմաստներ): Ի տարբերություն արևմտյան խմբակցության այլ բարբառների՝ այս խմբին հատուկ են սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի դերբայակազմ ձևերը, այսինքն՝ սահմանական ու հարկադրական ապառնիները ձևային արտահայտությամբ տարբերակված են:

Արևմտյան խմբակցության բարբառների գերակշիռ մասում ձևակազմական նույնությամբ բնութագրվում են սահմանական և ենթադրական, սահմանական և հարկադրական եղանակների իմաստները դրսևորող կազմությունները, որի հետևանքով դրանցում առկա է 5 եղանակային իմաստների արտահայտման 3 կառուցատիպ:

Վերոնշյալից բխում է, որ արևելյան և արևմտյան խմբակցության բարբառներում եղանակային ձևերը հակադրվում են նաև բովանդակության պլաններով՝ դրսևորելով միևնույն ժամանակաձևի իմաստագործառական տարբեր բեռնվածություն, թեև, անշուշտ, առկա են և լիակատար համընկումներ, օրինակ՝ ըղձական եղանակի ժամանակաձևերը արտահայտում են գործողության կատարման ցանկություն, հրամայականինը՝ հրաման, խնդրանք: Սրան հակառակ՝ սահմանական եղանակի ժամանակաձևերը արևելյան խմբակցության բարբառներում դրսևորում են խոսելու պահին, դրանից առաջ կամ դրանից հետո կատարվող

գործողություն, արևմտյան խմբակցությունում՝ նաև ենթադրաբար կատարվելիք գործողություն: Այնուհետև ենթադրականը արևելյան խմբակցությունում արտահայտում է պայմանով կամ ենթադրաբար կատարելի գործողություն և ունի առանձին ձև, մինչդեռ արևմտյան խմբակցությունում ենթադրականի և սահմանականի եղանակային իմաստները հատկանշվում են ձևային նույնությամբ: Դրանց իմաստային տարբերակվածությունը դրսևորվում է խոսքաշարում: Հարկադրական եղանակի ժամանակաձևերին արևելյան խմբակցության բարբառներում բնորոշ են հարկադրաբար, արևմտյան խմբակցությունում՝ նաև հաստատապես կատարելի գործողության իմաստներ:

2. Տարածքային տարբերակներում անկախ և կախյալ դերբայների տարբերությունը չեզոքացել է, և դերբայական բոլոր ձևերին, որպես գործառական հատկանիշ, բնորոշ է վերլուծական ժամանակաձևերի կազմությանը մասնակցելը: Սակայն արևելյան և արևմտյան խմբակցություններում տարբեր է դրանց գործածության հաճախականությունը: Եթե արևելյան խմբակցությունում վերլուծական ձևեր են կազմվում անորոշ, անկատար, համակատար, վաղակատար, հարակատար, ապակատար և ժխտական դերբայներով, ապա արևմտյան խմբակցությունում վերլուծական ձևերի կազմությանը մասնակցում են անորոշ, վաղակատար, հարակատար, ապակատար, ենթակայական և ժխտական դերբայները: Անորոշ դերբայը արևմտյան խմբակցությունում ժամանակաձևային կազմությունների բաղադրիչ է դառնում միայն Համշենի և Նոր-Նախիջևանի բարբառներում, իսկ արևելյան խմբակցությունում, որպես եղանակային ձևերի բաղադրիչ, լայն գործածություն ունի: Հարակատար դերբայը, ի տարբերություն արևելյան խմբակցության, որտեղ նրանով կազմված ժամանակաձևերը բնորոշ են չեզոք և կրավորական սեռի բայերին, մեծ հաճախականություն ունի արևմտյան խմբակցության բարբառներում: Արևմտյան խմբակցությունում, ի տարբերություն արևելյանի, ապառնի դերբայով ժամանակաձևերը սակավադեպ են: Արևելյան խմբակցության ենթակայական դերբայը չունի ձևաբանական արժեք, մինչդեռ արևմտյան խմբակցության Համշենի բարբառում այն մասնակցում է եղանակաժամանակային ձևերի կազմությանը:

3. Արևելյան և արևմտյան խմբակցության բարբառները տարբերվում են ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի կազմությամբ: Արևելյան խմբակցությունում դրանք դերբայակազմ են, իսկ արևմտյանում՝ մասնիկակազմ: Դերբայակազմ խմբում առանձնացրել ենք երեք տարածք՝ դերբայների վերջամասնիկներով *(ում, լիս, լ)* պայմանավորված: Նկատի ունենալով եղանականիշ մասնիկների ծագումնաբանական հիմքերը՝ դրանք միավորել ենք երեք խմբում՝ *կու (կը, գու, գը), կա (գա)* և *հա (հա, ա, ը)*, ըստ որում՝ բարբառային երեք տարածք ենք սահմանազատել նաև մասնիկակազմ խմբում: Հաշվի առնելով բարբառային որոշակի տարածքում ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերի տարբեր կառուցատիպերի զուգահեռ գործածությունը՝ առանձնացրել ենք գրաբարատիպ-մասնիկակազմ, գրաբարատիպ-դերբայակազմ և մասնիկակազմ-դերբայակազմ խմբեր:

Բարբառների արևմտյան և արևելյան խմբակցությունները հակադրվում են նաև ընդհանրական և շարունակական մասնիկների առկայություն-բացակայություն հատկանիշով: Դրանք գործածվում են միայն արևմտյան խմբակցությունում, և, ի տարբերություն ընդհանրական ներկայի եղանականիշ մասնիկների, գործառապես բազմարժեք չեն. հանդիպում են սահմանական եղանակի ոլորտում՝ ձևավորելով շարունակական ենթիմաստը:

4. Բարբառային միավորներում սահմանական և ենթադրական ապառնիների և անցյալի ապառնիների ժամանակային իմաստների արտահայտության տարբեր ձևեր են գործածվում: Դրանք մի դեպքում կազմվում են *դերբայ+օժանդակ բայ* կաղապարով, մեկ այլ դեպքում՝ *եղանականիշ մասնիկ+դիմավոր* կամ անդեմ ձևեր զուգորդությամբ: Նկատի ունենալով վերոնշյալ սկզբունքը՝ բարբառները միավորել ենք տիպաբանական երկու խմբում՝ դերբայակազմ և մասնիկակազմ: Սակայն եթե սահմանական ապառնիի և անցյալի ապառնիի դեպքում դերբայակազմ խմբում առանձնացրել ենք բարբառային երկու տարածքներ՝ հիմք ընդունելով տարբեր դերբայների (ապառնի և ենթակայական) կիրառությունը *(խըմէլու էմ, ուղօղ ըմ)*, իսկ մասնիկակազմ խմբում երեք տարածքներ ենք սահմանազատել՝ պայմանավորված եղանականիշ տարբեր մասնիկների գործածությամբ *(պիտի, կու, մըն)*, ապա պետք է նկատել, որ ենթադրական ապառնիի և անցյալի ապառնիի դեպքում դերբայակազմ և մասնիկակազմ տիպերից յուրաքանչյուրը հատուկ է բարբառային մեկ տարածքի:

5. Արևմտյան խմբակցության բարբառներում ըղձական եղանակի բայաձևերից համապատասխան եղանականիշ մասնիկների միջոցով կազմվում են սահմանական ներկայի և անցյալ անկատարի (մասնիկակազմ բարբառներում), ենթադրական, հարկադրական ապառնիների և անցյալի ապառնիների ժամանակաձևերը: Ըղձական ապառնիի իմաստի արտահայտման համար բարբառների արևելյան և արևմտյան խմբակցություններում գործածվում է համադրական կազմության մեկ կառուցատիպ, իսկ ըղձական եղանակի անցյալի ապառնիի իմաստը դրսևորվում է համադրական կազմության մեկ (հինհայերենյան անցյալ անկատար տիպի բայաձևերով) և վերլուծական կազմության երկու կառուցատիպերով *(հինհայերենյան անցյալ անկատար տիպի բայաձևեր+ժամանականիշ մասնիկներ, գրաբարյան անցյալ անկատարի եզակի 3-րդ դեմքի բայաձևեր+դիմային վերջավորություններ)*:

6. Բարբառային միավորների ժխտական խոնարհման հարացույցը բնորոշվում է մասնիկավորումով: Ժխտական մասնիկներն են՝ *չ-*, *մի՛* և *ոչ*: Արևմտյան խմբակցության բարբառներում ընդհանրացել է *չ-* մասնիկի կիրառությունը, իսկ արևելյան խմբակցությունը հատկանշվում է *չ-* և *ոչ* ժխտական մասնիկների գործածությամբ: *Մի՛* արգելական մասնիկի կիրառությունը բարբառային միավորներում սահմանափակվել է արգելական հրամայականի ժամանակաձևերի իմաստային տիրույթով:

Եղանականիշ նախամասնիկ չունեցող ժամանակաձևերի դրական և ժխտական կազմությունները (դերբայակազմ ժամանակաձևեր, անցյալ կատարյալ, ըղձական ապառնի և անցյալի ապառնի, հրամայական

ապառնի) ունեն միևնույն ձևը (տարբերվում են միայն *չ-* ժխտական մասնիկով): Բացառություն են կազմում արգելական հրամայականի ժամանակաձևերը, որոնց ժխտական խոնարհման ձևերը կազմվում են *մի՛* մասնիկով: Արգելական հրամայականի հոգնակիի իմաստը դրսևորվում է *մի՛* մասնիկով կամ բայածնի հոգնակի թվով: Վերլուծական կազմություն ունեցող ժամանակաձևերին ժխտական խոնարհման հարացույցում բնորոշ են *դերբայ+օժանդակ բայի ժխտական ձև*, *դիմավոր ձև+ոչ ժխտական մասնիկ*, *դիմավոր ձև+մի՛ ժխտական մասնիկ* կաղապարային կառույցները, իսկ համադրական ժամանակաձևերը հատկանշվում են *չ-ժխտական մասնիկ+դիմավոր ձև* կառուցատիպով:

Եղանականիշ մասնիկ ունեցող ժամանակաձևերին (սահմանական ներկա և անցյալ անկատար, ենթադրական, հարկադրական ապառնի և անցյալի ապառնի) ժխտական խոնարհման հարացույցում նույնպես բնորոշ է կառուցվածքային երկու կաղապար՝ վերլուծական և համադրական: Արևմտյան խմբակցության բարբառների՝ եղանականիշ մասնիկով կազմված սահմանական ներկա և անցյալ անկատար, ենթադրական ապառնի և անցյալի ապառնի ժամանակաձևերի ժխտական կազմությունները հատկանշվում են եղանականիշ մասնիկի առկայությամբ-բացակայությամբ: Դրանցում եղանականիշ մասնիկը պահպանվում կամ դուրս է ընկնում: Երկրորդ դեպքում առկա են ժխտականի համադրական՝ *չ-մասնիկ+դիմավոր բայածև*, և *օժանդակ բայի ժխտական ձև+դիմավոր* կամ *անդեմ բայաձև* վերլուծական կազմությունները: Ի տարբերություն արևմտյանի՝ արևելյան խմբակցությունում եղանականիշ նախամասնիկ ունի ենթադրական եղանակը, որի ժխտական խոնարհման հարացույցում գործածվում են վերլուծական կազմություններ՝ *օժանդակ բայի ժխտական ձև+ժխտական դերբայ (չէմ մընա)*: *Պիտիմ* բայով և *պիտի* եղանականիշ մասնիկով կազմություններում ժխտական մասնիկը գործածվում է եղանականիշին կից կամ ունի անկախ գործածություն: Սա բնորոշ է արևելյան խմբակցության բարբառներին:

7.Հայերենի տարածքային տարբերակներում առկա են եղանակաժամանակային ձևերի կառուցվածքային տարբեր կաղապարներ: Բարբառների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ դրական խոնարհման վերլուծական կազմությամբ ժամանակաձևերը քանակով գերազանցում են համադրական կազմություններին (22/8 հարաբերակցությամբ): Ժխտական խոնարհման դեպքում նույնպես վերլուծական կազմությամբ ժամանակաձևերը գերակշիռ մաս են կազմում (35/2 հարաբերակցությամբ): Ինչպես դրական, այնպես էլ ժխտական խոնարհման դեպքում վերլուծական կառույցների կաղապարները բազմազան են և տարատեսակ: Երկու խմբակցություններում էլ վերլուծական կազմություն ունեն սահմանական եղանակի ժամանակաձևերը ̀- μ³ ó³ éáõÃÛ
տարյալի, որը արևելյան խըմբակցության բարբառներում ունի ոչ միայն համադրական, այլև վերլուծական կառուցվածք (Ագուլիս-Մեղրիի բարբառախումբ): Ենթադրական և հարկադրական եղանակների ժամանակաձևերը բարբառների երկու խմբակցություններում էլ գերազանցապես վերլուծական կազմություն ունեն, սակայն եթե արևելյան խմբակցության

բարբառներում վերլուծական տիպը ձևավորվում է *դերբայ+օժանդակ բայ* կաղապարով, ապա արևմտյան խմբակցությունում վերլուծական կառուցատիպի հիմնական բաղադրիչը դիմավոր բայն է, որին բաղադրվում են եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկներ:

8. Տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերը, կրելով ներլեզվական ու արտալեզվական գործոնների ազդեցություն, ժամանակի ընթացքում ենթարկվել են իմաստա-կառուցվածքային փոփոխությունների: Դրանք պայմանավորված են բարբառային ազդեցություններով և ներթափանցումներով, եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկների հնչյունական և իմաստային անցում-ներով (անկումով կամ փոխարինումով), ինչպես նաև կաղապարային կառույցների գործառական սահմանափակվածությամբ: Բարբառային միավորների մի մասում փոփոխությունները տեղի են ունեցել եղանականիշ կամ ժամանականիշ մասնիկներով կազմություններում. եղանականիշը փոխարինվել է մեկ այլ մասնիկով կամ կրել իմաստա-գործառական փոփոխություն՝ շարունակականի ժամանականիշ մասնի-կից վերածվելով ընդհանրական ներկայի և անցյալ անկատարի ցուցիչի: Բարբառների մյուս խմբում սահմանական և հարկադրական ապառնիների կազմություններում նկատվում է գործառական փոփոխություն: Պիտի եղանականիշ մասնիկով բայաձևերին զուգահեռ գործածվող ենթակա-յական դերբայով հարադրությունները, նախապես արտահայտելով հարկադրական և սահմանական ապառնիների իմաստներ, ներկայումս որոշ վայրերում պահպանվել են միայն ժխտական խոնարհման հարացույցում:

9. Տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակար-գերում առկա են քերականական համանունության ներհարացուցային և միջհարացուցային տիպերը՝ տարաբնույթ դրսևորումներով: Միջհարա-ցուցային համանունությունը արտահայտվում է դիմավոր բայաձևերի (ըղձական ապառնի և անցյալի ապառնի, ըղձական ապառնի և հրամայական եղանակ), դիմավոր բայաձևերի և դերբայի (ըղձական ապառնի կամ անցյալի ապառնի և վաղակատար կամ ժխտական դեր-բայներ), դերբայական ձևերի (անորոշ և վաղակատար) միջև՝ պայմա-նավորված դիմաթվանիշների, դիմաթվանիշների և վերջամասնիկների, ինչպես նաև վերջամասնիկների ընդհանրությամբ:

Ներհարացուցային համանունությունը դրսևորվում է ըղձական անցյալի ապառնի ժամանակաձևերում՝ դիմաթվանիշ վերջավորու-թյունների նույնությամբ պայմանավորված: Դրանք համանուն զույգեր են կազմում եզակի և հոգնակի թվի տարբեր դեմքերում: Ներհարացուցային համանունության պլանում առանձնացրել ենք երկանդամ և եռանդամ շարքեր: Երկանդամ համանունական ձևերը մի դեպքում գործառում են միայն եզակի թվի հարացույցում (եզակի 2-րդ և 3-րդ դեմքերում), մեկ այլ դեպքում՝ միայն հոգնակի թվում: Առկա են նաև համանունական երկանդամ շարքեր եզակի և հոգնակի թվերի հարացույցներում

միաժամանակ՝ եզակի 2-րդ ու 3-րդ և եզակի ու հոգնակի 1-ին դեմքերում, ինչպես նաև հոգնակի 1-ին ու 2-րդ և եզակի 2-րդ ու 3-րդ դեմքերում: Եռանդամ համանունությամբ հատկանշվում է միայն եզակի թիվը, որի բոլոր դեմքերում գործածվում է նույն բայաձևը:

10. Հայերենի տարածքային տարբերակների եղանակաժամանակային կազմություններին բնորոշ է համանիշությունը, երբ նույն իմաստի դրսևորման համար քերականական տարբեր կառույցներ են գործածվում: Եղանակաժամանակային ձևերում համանիշությունը դրսևորվում է ձևաբանական այնպիսի միջոցներով, որոնք հատկանշվում են իմաստային համարժեքությամբ և ձևային տարբերակվածությամբ: Նյութի դիտարկումից պարզվում է, որ համանիշության դրսևորումները զուրկ են միօրինակությունից և անհամասեռ պատկեր են ներկայացնում ոչ միայն տարածական բնութագրի, այլև բայական միևնույն հարացույցի առումներով: Ըստ այդմ, բարբառների եղանակաժամանակային համակարգերում առանձնացվում են քերականական համանիշներ, որոնց առկայությունը պայմանավորված է ժամանակաձևերի կառուցատիպերով:

11. Եղանակի կարգը տարածքային տարբերակներում բնորոշվում է քերականական բազմիմաստությամբ (բովանդակության պլանում): Նկատելի է, որ ձևային նույնությամբ բնութագրվող եղանակաժամանակային կազմությունները հաճախ իմաստային տարբեր բեռնվածություն են դրսևորում: Ժամանակաձևերի քերականական բազմիմաստությամբ նույնպես հակադրվում են արևելյան և արևմտյան խմբակցության բարբառները: Բազմիմաստություն հիմնականում առկա է արևմտյան խմբակցության բարբառների եղանակաժամանակային համակարգերում, որոնցում բացակայում է եղանակաժամանակային իմաստի արտահայտման այս կամ այն ձևը: Սակայն եթե գրաբարում դրանց ձևաբանական հակադրությունը արտահայտվում էր դիմաքվային վերջավորությունների միջոցով, ապա բարբառներում դրան գումարվում է նախամասնիկների առկայության-բացակայության հատկանիշը:

Արևելյան խմբակցության բարբառներում բազմիմաստությունը դրսևորվում է հարակատար և վաղակատար դերբայներով կազմված վերլուծական ժամանակաձևերում: Վաղակատար դերբայով արտահայտվող բազմիմաստությունը համարել ենք միջբարբառային, քանի որ առկա է բարբառային տարբեր միավորներում, իսկ բազմիմաստության մյուս բոլոր արտահայտությունները՝ ներբարբառային՝ ելնելով տարածքային նույն միավորի ներսում դրսևորվելու հանգամանքից:

12. Սույն ատենախոսության հետազոտության առարկան և եզրակացությունները հաստատում են գիտության մեջ շրջանառվող այն տեսակետը, որ բարբառների եղանակաժամանակային համակարգերը անմիջականորեն կապվում են լեզվի տարժամանակյա կտրվածքների

հետ, որոնք իրենց անմիջական կնիքն են թողել բայական համակարգերի վրա՝ ստեղծելով բայական հատկանիշների ընդհանրությունների և տարբերությունների խմբեր, որոնցով կարելի է որոշել բարբառների կամ բարբառային խմբակցությունների տիպաբանական բնութագրերը:

Ատենախոսության հիմնական դրույթները արտացոլված են հետևյալ հրապարակումներում.


1. Շարունակական ներկան հայերենի բարբառներում, Երկրորդ հայերենագիտական միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 1993, էջ 61-69:

2. The continuous present in Armenian dialects, Annual of Armenian linguistics, Vol. 15, USA, 1994, pp.43-63:

3. Սահմանական անցյալ անկատարի արտահայտությունը հայերենի մասնիկավոր կազմությամբ բարբառներում, Նշանագիտություն և լեզուների դասավանդում (պրագմատիկ լեզվաբանության հարցերին նվիրված 2-րդ միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ), Երևան, 1996, էջ 20-22:

4. On morphological classification of Armenian dialects, Հայերենագիտական 6–րդ միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Փարիզ, 1999, 1 էջ:

5. Անցյալ կատարյալի ձևահիմնատային դրսևորումները հայերենի տարածքային տարբերակներում, Ակադեմիկոս Գ. Ջահուկյանի 80-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Երևան, 2000, էջ 12-13:

6. Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման շուրջ, SLOVO, Institute National des langues et Civilisations Orientales, Paris, Vol. 26-27, 2001, էջ 122-130:

7. Անցյալ անկատարի դիմաթվային վերջավորությունների համանունության դրսևորումը հայերենի մասնիկավոր կազմությամբ բարբառներում, Գիտական աշխատություններ: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանութօւն, պրակ 3, Երևան, 2003, էջ 91-96:

8. Անցյալ կատարյալի բաղադրյալ կազմությունների գործառական-տարածքային բնութագիրը, Գիտական աշխատություններ: Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն, պրակ 4, Երևան, 2004, էջ 149-155:

9. A Few Idiosyncracies of the Conjugation System in Armenian Dialects, Հայերենագիտական 7–րդ միջազգային գիտաժողովի զեկուցումների դրույթներ, Ան Արբոր, ԱՄՆ, 2003, էջ 7:

10. Նկատառումներ հայերենի բարբառների խոնարհման համակարգի զարգացման վերաբերյալ, Նյութեր մաշտոցյան գրերի 1600-ամյակին նվիրված գիտաժողովի, Երևան, 2005, էջ 19-30:
11. Ապառնիի իմաստային դրսևորումները հայերենի տարածական տարբերակներում, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2006, էջ 54-60:
12. Հայերենի բարբառների դիմաթվանիշ ցուցիչները, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2007, էջ 63-72:
13. Հայերենի բարբառագիտական ատլաս (կազմման սկզբունքները և առանձնահատկությունները), Հայկազյան հայագիտական հանդես, Բեյրութ, 2007, էջ 467-475:
14. Անորոշ դերբայը որպես եղանակային ձևերի բաղադրիչ, Գիտական աշխատություններ, պրակ Զ, Երևան, 2008, էջ 72-79:
15. Բայի անդեմ ձևերի գործառական տարարժեքության վերացումը բարբառներում, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2008, էջ 44-55:
16. Բարբառային նյութի մշակման ու համակարգչայնացման սկզբունքերն ու առանձնահատկությունները, Армянский гуманитарный вестник, 2/3-// Москва/Ереван - 2009, Էջ 42-52:
17. Զուգաձևություններ բարբառների խոնարհման համակարգում, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2009, էջ 50-57:
18. Սահմանական եղանակի ներկա ժամանակի տարածական-գործառական բնութագիրը հայերենի բարբառներում, Հայերենի բարբառագիտական ատլաս, պրակ 3, Երևան, 2010, էջ 232-295:
19. Անցյալ ժամանակի դրսևորման ձևաբանական միջոցները բարբառներում, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2010, էջ 90-103:
20. Եղանականիշ մասնիկով ժամանակաձևերի ժխտական կազմության առանձնահատկությունները բարբառներում, Ջահուկյանական ընթերցումներ, Երևան, 2011, էջ 91-101:
21.Ըղձական եղանակի տարածագործառական բնութագիրը, Բանբեր (Հայագիտություն և զուգադրական լեզվաբանություն), Երևան, 2012, էջ 13-18:
22. О происхождение частицы *ku* в армянском языке, Армянский гуманитарный вестник, 4, Москва/Ереван-2012, ñò . 5-13.
23.Բազմիմաստության դրսևորումները հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգում, Հայ լեզվաբանության 9-րդ միջազգային գիտաժողով. Թեզիսների ժողովածու (հայերեն, անգլերեն, ռուսերեն), Սանկտ Պետերբուրգ, 2012, էջ 50-53:
24. Քերականական համանունության դրսևորումները հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգում, Կանթեղ: Գիտական հոդվածներ: Երևան, 2013, էջ 122-128:

25.Տեղաշարժեր բարբառների եղանակաժամանակային համակարգերում, Գիտական նյութերի ժողովածու (հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Վանաձոր, 2013, էջ 60-69:

26. Քերականական համանիշ կառույցների կիրառումը հայերենի բարբառների ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերում, Միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ (հայերեն, անգլերեն, ռուսերեն), Երևան, 2013, էջ 375-376:

27. Դիտարկումներ հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննության շուրջ, Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով, զեկուցումների դրույթներ, Երևան, 2013, էջ 117-118:

28. Հայերենի բարբառների եղանակաժամանակային համակարգերի տարածագործառական բնութագիրը, Երևան, 2013, 242 էջ:

**Геворгян Гаяне Герасимовна**

## Сопоставительный анализ категориальных форм времен и наклонений диалектов армянского языка

Диссертация на соискание ученой степени доктора филологических наук по специальности 10.02.01 - Армянский язык.

Защита состоится 23 декабря 2013 года в 15[00] по адресу 0015, г. Ереван, ул. Григора Лусаворича 15, на заседании специализированного совета по лингвистике 019 ВАК, при Институте языка им. Гр. Ачаряна Национальной академии наук РА, по адресу 0015 Ереван, ул. Г. Лусаворича 15.

## РЕЗЮМЕ

С точки зрения целостного формально-семантического описания глагольной системы армянского языка обретает важное значение изучение категориальных форм времен и наклонений диалектов, которые в течение исторического развития претерпели значительные изменения, отразившиеся в различных территориальных вариантах языка. В диссертационной работе модально-временные конструкции диалектных единиц примерно из 500 населенных пунктов впервые становятся объектом системного структурно-сопоставительного анализа в синхроническом и диахроническом аспектах. Диссертация состоит из введения, четырех глав, заключения, списка использованной литературы и приложения, содержащего 6 таблиц и 26 карт.

**В первой главе** (“Историческое развитие систем времен и наклонений в диалектах”) дается диахроническое описание форм времен и наклонений, обобщается весь фактический материал и делаются теоретические выводы относительно их происхождения, последующего развития и видоизменений их структурных и семантических особенностей.

Анализ модально-временных конструкций выявляет, что в ходе исторического развития подверглись изменениям количество времен и наклонений (некоторые временные формы древнеармянсого языка вышли из употребления, уступив место новообразованиям), структура глагольной парадигмы, способы выражения значений глагольных грамматических кАтегорий и пр.

**Во второй главе** (“Сопоставительный анализ структурных компонентов диалектных форм наклонений глагола”) представляются диалектные проявления морфологических способов выражения грамматических категорий лица, числа, времени, дается сопоставительное описание структурных компонентов форм наклонений, выявляется их происхождение. Исследование показывает, что в территориальных вариантах армянского языка модально-

временные конструкции глагола делятся на два структурных типа – синтетический и аналитический, причем аналитический тип является преобладающим как в восточной, так и западной группировках диалектов.

**В третьей главе** (“Сопоставительный анализ структурных моделей диалектных форм времен и наклонений”) дается функционально-территориальная характеристика структурных моделей времен и наклонений, выявляются как общие черты, так и частные особенности и свойства их морфологической структуры, уточняются диалектные ареалы их распространения.

В диалектах имеется противопоставление пяти наклонений: изъявительного, желательного, условного, принудительного и повелительного. Первые четыре наклонения противопоставляются повелительному наличием частиц модальности (отсутствующих в повелительном), а также разнятся между собой по аналитическому либо синтетическому типу образования.

Сопоставительный анализ модально-временных систем глагола в диалектах, проведенный в разделе “Структурное описание моделей образования диалектных форм времен и наклонений”, показывает, что в территориальных вариантах армянского языка аналитические конструкции значительно преобладают по сравнению с синтетическими как в положительном (соотношение 22/8), так и в отрицательном спряжении (соотношение 35/2).

В разделе “Сдвиги в диалектных модально-временных системах“ представляются исторические изменения, обусловленные взаимовлиянием диалектов и взаимопроникновением языковых фактов, фонетическими либо семантическими переходами показателей времен и наклонений, их выпадением или заменой, а также функциональными ограничениями структурных моделей.

**В четвертой главе** (“Проявления взаимоотношений между планом выражения и планом содержания в модально-временных системах диалектов”) рассматриваются грамматическая омонимия, синонимия и полисемия.

В модально-временных системах территориальных вариантов обнаруживается два типа грамматической омонимии – межпарадигматическая и внутрипарадигматическая. Межпарадигматическая омонимия проявляется между личными глаголами, между личными глаголами и причастиями, между разными причастными формами и обусловлена омонимией либо личных окончаний с разными категориальными значениями, либо омонимией окончаний личных форм и причастий, либо же омонимией окончаний разных причастий. Внутрипарадигматическая омонимия проявляется в формах прошедшего времени желательного наклонения и обусловлена одинаковыми окончаниями разных лиц.

Для территориальных вариантов армянского языка характерна также грамматическая синонимия, т.е. употребление в модально-временных системах разных структурных конструкций с одинаковыми значениями. В диалектах образование модально-временных форм может происходить посредством синонимичных морфологических средств, одинаковых по значению и разных по форме.

Полисемия в диалектных формах времен и наклонений в основном характерна для западной группировки диалектов, в которых может отсутствовать та или иная отдельная форма для выражения конкретного значения времен и наклонений. Зачастую одной и той же формой выражаются разные модально-временные значения. В диалектах восточной группировки полисемия проявляется во временных формах аналитической конструкции, образованных с помощью прошедшего и результативного причастий.

В диссертационной работе исследованы также грамматические формы, находящиеся в отношении дополнительной дистрибуции. Их наличие обусловлено вариативным использованием нескольких препозитивных частиц а также глаголов, имеющих варианты типов спряжений и залогов. Использование некоторых вариантов препозитивных частиц обусловлено позиционно – с глаголами, начинающимися с гласного либо согласного звука.

В заключении обобщены выводы относительно структурно-семантических и ареальных особенностей модально-временных форм, полученные в результате исследования.

В приложении даны принципы обработки (в том числе компьюторной) диалектного материала а такжеосталения таблиц и картографирования, Карты представляют глагольные признаки (изоглоссы) армянских диалектов в ареальном распределении, а таблицы отмечают их наличие или отсутствие в 460-ти населенных пунктах.

**Gayane Gevorgyan**

# A Comparative Study of the Mood-Tense Systems of Verbs of Armenian Dialects

A thesis claiming a scientific degree of a doctor of philological sciences on the specialty 10.02.01 - Armenian Language.

The defense will be held on Dectember 23, 2013, at 15$^{00}$ at the session of Special Council of Linguistics 019 NAC at the Institute of Language after H. Acharyan of National Academy of Sciences of RA. Address: 15 Grigor Lusavorich, Yerevan, Armenia.

## SUMMARY

From the viewpoint of integral formal-semantic description of the verbal system of the Armenian language, the study of categorial forms of tense and mood in dialects, that in the course of the historical development underwent considerable changes reflected in various territorial varieties of the language, is of central importance. In the present paper modal-temporal constructions of dialectical units from about 500 settlements become the object of systemic structural-comparative analysis in both synchronic and diachronic aspects for the first time. The present thesis consists of an introduction, four chapters, conclusion, references and the appendix containing 6 tables and 26 maps.

In **Chapter 1** ***(Historical Development of the Tense and Mood Systems in Dialects)*** a diachronic description of the tense and mood forms, summarizing the whole factual material, is given, and conclusions regarding their origin, further development and modification of their structural and semantic peculiarities are drawn.

The analysis of modal-temporal constructions reveals that in the course of the historical development the number of tense and mood underwent changes (certain temporal forms of Old Armenian became out of use yielding to new formations), and the structure of the verbal paradigm and the ways of expressing the grammatical categories of the verb are modified.

In **Chapter 2** ***(A Comparative Analysis of the Components of Dialectical Forms of Verbal Moods)*** dialectical manifestation of morphological means of expressing grammatical categories of person, number and tense are presented, a comparative description of the structural components of the forms of mood is given, and their origin is revealed. The study shows that in the territorial varieties of the Armenian language the modal-temporal constructions of the verb are subdivided

into two structural types: synthetic and analytical, at that the analytical type is predominant in both western and eastern groups of dialects.

In **Chapter 3** ***(A Comparative Analysis of the Structural Models of the Dialectical Forms of Tenses and Moods)*** functional-territorial characteristics of the structural models of tenses and moods are given, both general and special features of their morphological structure, specifying dialectical areas of their distribution, are revealed.

In dialects there is the opposition of five moods: Indicative, Optative, Conditional/Subjunctive, Compulsive and Imperative. The first four moods are opposed to the Imperative Mood due to the presence of modal units (non-existent in the Imperative Mood) and differ from each other according to the analytical or synthetic ways of formation.

The comparative analysis of the modal-temporal systems of the verb in the dialects, conducted in the subchapter *Structural Description of the Models of Forming the Dialectical Forms of Tenses and Moods*, shows that in the territorial varieties of Armenian analytical constructions significantly prevail the synthetic ones both in the positive (at a ratio 22-8) and in the negative (at a ratio 35-2) conjugation.

In *The Shifts in Dialectical Modal-Temporal Systems* the historical changes conditioned by the interference of dialects and interpenetration of the linguistic phenomena/facts, by the phonetic or semantic transitions of the indicators of tenses and moods, by their loss or substitution and by the functional restrictions of the structural models are presented.

In **Chapter 4** ***(Manifestations of the Interrelations between the Plane of Expression and the Plane of Content in the Modal-Temporal Systems of the Dialects)*** grammatical homonymy, synonymy and polysemy are studied.

In the modal-temporal systems of the territorial varieties two types of grammatical homonymy are revealed: interparadigmic and intraparadigmic. Interparadigmatic homonymy is manifested in finite verbs, finite verbs and participles, various participial forms, and is conditioned either by the homonymy of finite endings with different catigorial meanings or by the homonymy of the endings of other finite forms and participles or by the homonymy of the endings of various participles. Intraparadigmatic homonymy is manifested in the forms of the past tense of the optative mood and is conditioned by the endings of different persons.

Grammatical synonymy i.e. the usage of the modal-temporal systems of various structural constructions of the same meaning, is also characteristic of the territorial varieties of the Armenian language. In the dialects the formation of the modal-temporal forms may occur by means of synonymic morphological means having the same meaning and different forms.

Polysemy in dialectical forms of tenses and moods is mainly characteristic of the western group of dialects in which one or another form of expressing the

concrete meaning of tenses and moods may not be recorded. One and same form is very frequently used to express different modal-temporal meanings. In the western group of dialects the polysemy is expressed in all the temporal forms of the analytical construction formed with the help of the past and resultative participles.

In the present paper the grammatical forms in complementary distribution are also examined. Their presence is conditioned by the variable use of several prepositive particles and verbs having variants of conjugation and voice. The use of some variants of prepositive particles is conditioned by the place of the verbs starting with a vowel or a consonant.

In the Conclusion the assumptions regarding the structural-semantic and areal peculiarities of modal-temporal forms are summarized.

In the Appendix the principles of processing (including computer processing) of the dialectical material, table compiling and mapping are given. The maps present the verbal features (isoglosses) of the Armenian dialects in their areal distribution, and the tables mark their presence or absence in 460 dialect-speaking sites.